«Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպություն

Հաստատում եմ՝
Իրավունքի ինստիտուտի տնօրեն
Քալաշյան Մ.Ա.______________
«23» հունիսի 2026 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Իրավունքի տեսության և Սահմանադրական իրավունքի

Հեղինակ՝ ի.գ.թ., դոցենտ Դալլաքյան Լ.Գ.

# ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Ռուսաստանի պետության և իրավունքի պատմություն

Մասնագիտություն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

Կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն»

## 1. Դասընթացի ներածություն

«Ռուսաստանի պետության և իրավունքի պատմություն» դասընթացը վերաբերվում է ընդհանուր մասնագիտական դասընթացների կրթաբլոկին:

«Ռուսաստանի պետության և իրավունքի պատմությունը» որպես ուսումնական առարկա ժամանակագրական կարգով դիտարկում է Ռուսաստանի պետական-իրավական համակարգի ձևավորումն ու զարգացումը՝ Հին Ռուսիայի պետականության, հասարակական և իրավական համակարգերի ձևավերման պահից, մինչև ժամանակակից Ռուսաստանի պետական կարգի և իրավական համակարգի ներկայիս վիճակը:

Այս դասընթացի ուսումնասիրությունը ուսանողներին հագեցնում է պատմական փորձի իմացությամբ, մշակում է պատմաիրավան մոտեցումները տարբեր խնդրահարույց երևույթների նկատմամբ, նպաստում է ռուսական պետության էության և զարգացման հիմնական միտումների բացահայտմանը, օգնում է խորը ներթափանցել Ռուսաստանի իավական համակարգի առանձնահատկությունների մեջ՝ դիտարկելով իրավունքի ճյուղերը, ինստիտուտները, սկզբունքները և նորմերերը դրանց պատմական զարգացման համատեքստում:

Միևնույն ժամանակ, «Ռուսաստանի Պետության և իրավունքի պատմությունը» հիմք է ստեղծում այնպիսի իրավունքի ճյուղերի հետագա ուսումնասիրության համար, ինչպիսիք են «սահմանադրական իրավունքը», «քաղաքացիական իրավունքը», «քրեական իրավունքը» և այլն՝ դիտարկելով այս ճյուղերի և ինստիտուտների պատմական զարգացումը և դրանով իսկ մոտեցնելով ուսանողներին իրավունքի ճյուղերի և, ընդհանուր առմամբ, համակարգի ներկա վիճակի բնութագրին:

*Դասընթացի կապն ուսումնական պլանի այլ առարկաների հետ:* «Ռուսաստանի պետության և իրավունքի պատմություն» դասընթացը տրամաբանորեն փոխկապված է «Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն», «Հայաստանի պետության և իրավունքի պատմություն», «Իրավական ուսմունքների պատմություն» և այլ պատմաիրավական ուսումնական դասընթացների հետ, ինչպես նաև «Պետության և իրավունքի տեսություն» դասընթացի հետ:

## 2. Դասընթացի նպատակն ու խնդիրները

*Դասընթացի նպատակն է* հանդիսանում Ռուսաստանի պետության և իրավական համակարգի ինչպես նախորդ դարերի, այդպես էլ ժամանակակից բազմազան խնդիրների և զարգացումների ինքնուրույն վերլուծության և գնահատման հմտությունների ձեռքբերումը՝ Ռուսաստանի պետաիրավական երևույթների պատմական զարգացման վերաբերյալ ձեռք բերված գիտելիքների միջոցով:

*Դասընթացի շրջանակներում լուծվում են հետևյալ խդիրները.*

- Ռուսաստանի պետության և իրավունքի ձևավորման և զարգացման հիմնական փուլերի ուսումնասիրություն.
- Ռուսաստանի պետական և հասարակական կարգի կազմակերպման առանձնահատկությունների դիտարկումը տարբեր պատմական ժամանակաշրջաններում.
- ռուսական իրավունքի հիմնական իրավական հուշարձանների և աղբյուրների հետազոտում.
- իրավական համակարգի, իրավունքի ճյուղերի և ինստիտուտների, օրենսդրական համակարգի ուսումնասիրությունը պատմական տարբեր փուլերում.
- պատմական և իրավական երևույթների վերլուծությունը, որը կօգնի ուսանողին կողմնորոշվել ժամանակակից Ռուսաստանի իրավական խնդիրների լուծման հարցում.
- ընդհանուր պատմաիրավան մտածելակերպի մշակում

## 3. Դասընթացի օբյեկտը և առարկան

Դասընթացի օբյեկտն է հանդիսանում Ռուսաստանի պետության և իրավունքի առաջացման և զարգացման ընդհանուր օրինաչափությունների և հիմնական միտումների բացահայտումը:

Դասընթացի առարկան է հանդիսանում ռուսական իրականության կոնկրետ երևույթների և գործընթացների, ռուսական պետության և իրավունքի տիպերի և ձևերի առաջացումը, զարգացումը և փոփոխումը, ինչպես նաև պետական և իրավական ինստիտուտների, իրավունքի պատմական հուշարձանների առանձնահատկությունների հետազոտումը ժամանակագրական հերթականությամբ:

## 4. Դասընթացի մուտքային պահանջները

«Ռուսաստանի պետության և իրավունքի պատմություն» առարկան ուսումնասիրելուց առաջ ցանկալի է ունենալ ընդհանուր պատկերացումներ համաշխարհային պատմության հիմնական փուլերի և հիմնական իրավական կատեգորիաների վերաբերյալ

## 5. Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները, հմտությունները և կարողությունները

*Գիտելիքները՝*

- **Գիտելիք և իմացություն .**

1. Ռուսաստանի պետության և իրավունքի ձևավորման և զարգացման առանձնահատկությունների մասին հիմնարար գիտելիք.
2. Ռուսաստանի պետաիրավական ինստիտուտների և հասարակական կարգի ձևավորման վրա ազդող հիմնական գործոնների իմացություն.
3. Ռուսաստանի իրավական համակարգի, այդ թվում իրավունքի հուշարձանների, իրավունքի ճյուղերի և ինստիտուտների պատմական զարգացման միտումների վերաբերյալ հիմնարար գիտելիք.

*Հմտությունները՝*

- **Գիտելիքի և իմացության կիրառում.**

1. Կարող է արագ կողմնորոշվել իրավական համակարգի արդի խնդիրները լուծելիս, և դրանց վերաբերյալ ներկայացնել իր փաստարկված դիրքորոշումը՝ այդ թվում կիրառելով իրավական համակարգի պատմական զարգացման հիմնական ուղղությունների իմացությունը.
2. Կարող է իրավունքի մեկնաբանման կանոնների կիրառմամբ պարզաբանել հին ռուսական իրավունքի նորմերը և պայմանագրերը:

*Կարողունակությունը (կոմպետենցիան)՝*

- **Ընդհանրական իմացական կարողություններ (ներառյալ դատողություններ անելը).**

1. Կարող է կիրառել մասնագիտական գիտելիքները և դրսևորել վերլուծական հմտությունները Ռուսաստանի պետաիրավական երևույթների առավել հաճախ հանդիպող խնդիրները բացահայտելու, գնահատելու և դրանց լուծումների ուղիները առաջարկելու համար.

- **Ինքնուրույնությունը և պատասխանատվությունը (ներառյալ սովերելու կարողությունները).**

1. Ունակ է՝ ինքնուրույն կամ համապատասխան ղեկավարման ներքո բարեխղճորեն կիրառել պատմաիրավական դասընթացի շրջանակներում ձեռք բերված բոլոր վերլուծական հմտությունները իր հետագա մասնագիտական գործունեության մեջ.
2. Ունակ է՝ պարբերաբար ուսումնասիրել ռուսական օրենսդրությունը և իրավակիրառ պրակտիկան, և անհրաժեշտության դեպքում այն օգտագործել արտասահմանյան աշխատանքային այցերի ընթացքում՝ Ռուսաստանի բազմամշակութային աշխատանքային միջավայրում ինտեգրվելու համար

## 6. Դասավանդման եղանակները և մեթոդները

Դասընթացի շրջանակներում կիրառվում են ինչպես դասական, այնպես էլ ժամանակակից ինտերակտիվ տեխնոլոգիաների տարրեր (brainstorm, բանավեճ, դիսկուսիաներ, և այլ)։ Դասընթացի ուսումնական ծրագիրը ներառում է դասախոսություններ, սեմինարներ, ինչպես նաև ուսանողների ինքնուրույն աշխատանք։

Դասընթացի հիմնական տեսական նյութը մատուցվում է *դասախոսությունների* ընթացքում։ Դասախոսության ժամանակ ուսանողներին տրամադրվում են նաև օժանդակող (աշխատանքային) նյութեր։ Սեմինարական պարապունքներին և միջանկյալ/վերջնական ատեստավորմանը պատշաճ պատրաստվելու համար ուսանողներին արաջարկվում է դասախոսությունների ընթացքում կատարել նշումներ, գրի առնել դասախոսի կողմից ներկայացվող ձևակերպումների և գաhափարների էությունը և հակիրճ բովանդակությունը, ըստ հնարավորության արձանագրել առաջ քաշված խնդրահարույց հարցերի հնարավոր լուծումները։

*Սեմինարական* (գործնական) պարապմունքների ընթացքում կատարվում է դասախոսության ժամանակ մատուցված նյութերի մշակումը, ավելի խորը և մանրամասն ուսումնասիրությունը։ Սեմինարների ընթացքում դասախոսը վերահսկում է ուսանողների կողմից ուսումնական նյութի ընկալման և յուրացման աստիճանը և որակը։ Դասախոսի առաջարկությամբ ուսանողները լուծում են որոշակի առաջադրանքներ և խնդիներ, որոնք իրենց մեջ բովանդակում են ընթացիկ և նախորդ թեմաները։ Նման առաջադրանքները զարգացնում են ուսանողի՝ նյութը վերլուծելու հմտությունը, ամրապնդում են թեմաների հետևողական ուսումնասիրության և արագ յուրացման կարողությունները։

*Ինքնուրույն աշխատանքի* ընթացքում ուսանողը դասախոսի ուղղորդմամբ կատարում է դասընթացի նյութերի լրացուցիչ ուսումնասիրություն ըստ ուսումնական թեմատիկ ծրագրի՝ օգտվելով սույն ծրագրի ուսւմնամեթոդական նյութերի ցանկում թվարկված բազային, հիմնական և լրացուցիչ աղբյուրներից։ Ինքնուրույն աշխատանքի շրջանակներում ուսանողն առաջին հերթին պետք է ուշադրություն դարձնի ստացված գիտելիքների ամրապնդմանն ու համակարգմանը։

*Միջանկյալ ատեստավորումը* /մոդուլը անցկացվում է գրավոր, ողջ մոդուլի նյութերի ընդհանրացման և վերստուգման նպատակով, ուսանողներին տրամադրվում է մոդուլի թեմաների հարցաշար։

*Վերջնական ատեստավորմանը/ստուգարքին* լիարժեք պատրաստվելու համար ուսանողներին տրամադրվում է քննական հարցաշար, որի պահանջների համաձայն քննությանը նախապատրաստվելիս ուսանողը պետք է կրկնի դասընթացում ընդգրկված բոլոր նյութերը։

## 7. Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է «Ընդհանուր մասնագիտական դասընթացների կրթաբլոկում»՝ 4 ակադեմիական կրեդիտ և 144 ակադեմիական ժամ աշխատատարությամբ, որից 32 ակադեմիական ժամ նախատեսվում է դասախոսությունների և 32 ակադեմիական ժամ գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 1 ուսումնական տարվա 2 կիսամյակում

## 8. Դասընթացի աշխատատարության բաշխումն ըստ ուսումնական աշխատանքի տեսակների (ակադեմիական ժամերով)

| Ուսումնական աշխատանքների տեսակները | Ամբողջը, ակ. ժամ. | Բաշխում ըստ կիսամյակների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1 Կիս. | 2 Կիս. | 3 Կիս. | 4 կիս. | 5 Կիս. | 6 Կիս. | 7 Կիս. | 8 Կիս. |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1. Ըստ կիսամյակի ընդհանուր դասընթացի ուսուցման ծանրաբեռնվածությունը | | | 144 | | | | | | |
| 1.1. Լսարանային պարապմունքներ: | | | 64 | | | | | | |
| 1.1.1. Դասախոսություններ | | | 32 | | | | | | |
| 1.1.2. Սեմինարներ | | | 32 | | | | | | |
| 1.2. Ինքնուրույն աշխատանք | | | 53 | | | | | | |
| 1.3. Հսկ. ժամեր | | | 27 | | | | | | |
| Ամփոփիչ ստուգում (քննություն, դիֆերենցված ստուգարք) | | | | | | | | | |

## 9. Կշիռների բաշխումը ըստ մոդուլների և ստուգման ձևերի

| Ստուգման ձևերը | Ընթացիկ ստուգումների ձևերի կշիռները ընթացիկ ստուգումների ամփոփիչ գնահատականնե րում | Միջանկյալ ստուգումների ձևերի կշիռները միջանկյալ ստուգումների գնահատականներ ում | Միջանկյալ ստուգումների վերջնական գնահատականն երի կշիռները միջանկյալ ստուգումների ամփոփիչ գնահատականն երում | Միջանկյալ ստուգումների ամփոփիչ գնահատականի և վերջնական ստուգման գնահատականի կշիռները վերջնական ստուգման ամփոփիչ գնահատականու |
|---|---|---|---|---|

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | մ |
| **Ուսումնական աշխատանքի/ստուգման տեսակը** | M1 | M2 | | M1 | M2 | | | |
| Ստուգողական աշխատանք | | | | 0,6 | 0,6 | | | |
| Բանավոր ստուգում | 1 | 1 | | | | | | |
| Միջանկյալ ստուգումների վերջնական գնահատականներում ընթացիկ ստուգումների ամփոփիչ գնահատականների կշիռները | | | | 0,4 | 0,4 | | | |
| Միջանկյալ ստուգումների ամփոփիչ գնահատականում 1-ին միջանկյալ ստուգման վերջնական գնահատականի կշիռը | | | | | | | 0,5 | |
| Միջանկյալ ստուգումների ամփոփիչ գնահատականում 2-րդ միջանկյալ ստուգման վերջնական գնահատականի կշիռը | | | | | | | 0,5 | |
| Միջանկյալ ստուգումների ամփոփիչ գնահատականում 3-րդ միջանկյալ ստուգման վերջնական գնահատականի կշիռը | | | | | | | | |
| Վերջնական ստուգման ամփոփիչ գնահատականում միջանկյալ քննությունների արդյունքային գնահատականի կշիռը. | | | | | | | | 0,4 |
| **Դիֆերենցված ստուգարք** (Վերջնական | | | | | | | | 0,6 |

| ստուգման գնահատական) | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Σ=1 | Σ=1 | Σ=1 | Σ=1 | Σ=1 | Σ=1 | Σ=1 | Σ=1 |

**10.** Առարկայի բովանդակությունը

10.1 Թեմատիկ պլան (Առարկայի ծավալի բաշխում ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների)

| Առարկայի բաժինները և թեմաները | Ընդամենը (ակ. ժամեր) | Լեկցիաներ (ակ. ժամեր) | Պրակտիկ պարապմունքներ (ակ. ժամեր) | Ինքնուրույն աշխատանք |
|---|---|---|---|---|
| **1** | **2** | **3** | **4** | **5** |
| Թեմա 1. Հին ռուսական պետությունն ու իրավունքը (Կիևան Ռուսիա) 1X-X11 դարերում | **10** | **2** | **2** | **6** |
| Թեմա 2. Ռուսիայի պետությունն ու իրավունքը մասնատման ժամանակաշրջանում (X11 - XIV դարեր) | **14** | **4** | **4** | **6** |
| Թեմա 3. Ռուսիայի պետությունն ու իրավունքը կենտրոնացված Մոսկովյան պետության և դասային-ներկայացուցչական միապետության ժամանակաշրջաններում: | **14** | **4** | **4** | **6** |
| Թեմա 4. Ռուսաստանի պետությունն ու իրավունքը բացարձակ միապետության ձևավորման և զարգացման ժամանակաշրջանում ( **XVII- XVIII** դդ.) | **14** | **4** | **4** | **6** |
| Թեմա 5. Ռուսաստանի պետությունն ու իրավունքը բուրժուադեմոկրատական բարեփոխումների ժամանակաշրջանում (**XIX**-րդ դարի երկրորդ կես, **XX** դարի առաջին տասնամյակ) | **14** | **4** | **4** | **6** |
| Թեմա 6. Ռուսաստանի պետությունը և | **14** | **4** | **4** | **6** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| իրավունքը հեղափոխությունների և խորհրդային իշխանության ձևավորման ժամանակաշրջանում (XX դ. առաջին քարրորդ ) | | | | |
| Թեմա 7. Խորհրդային պետությունն ու իրավունքը «ՆԵՊ-ի» օրոք և 30-ականների ժամանակաշրջանում: | **14** | **4** | **4** | **6** |
| Թեմա 8. Խորհրդային պետությունն ու իրավունքը 50-70 -ականների շրջանում: «Լճացում»: | **12** | **3** | **3** | **6** |
| Թեմա 9. Ռուսաստանի պետությունը և իրավունքը «Վերակառուցման» և ԽՍՀՄ փլուզման ժամանակաշրջանում (1980-1991) | **11** | **3** | **3** | **5** |
| Ընդամենը | **117** | **32** | **32** | **53** |

## Մոդուլ 1

<u>10.2 Առարկայի բաժինների և թեմաների բովանդակությունը</u>

**Թեմա 1. Հին ռուսական պետությունն ու իրավունքը (Կիևան Ռուսիա) 1X- X11 դարերում**:

Կիևյան Ռուսիայի առաջացման հիմնական տեսությունները: Վարյագների դերը Ռուսիայում: Առաջին ժամանակագրական հիշատակումը Ռուսիայի մասին: 882 թվականի Նովգորոդյան և Կիևյան հողերի միավորումը միասնական Հին Ռուսական պետության ներքո: Կիևայն Ռուսիայի պետական կարգը: Իշխանության կենտրոնական մարմինները: Մեծ Իշխանի կարգավիճակը: Մեծ Իշխանին կից Խորհուրդի լիազորությունները: Ֆեոդալական համագումարները: Տեղական կառավարման համակարգը: Կիևյան Ռուսիայի հասարակական կարգի առանձնահատկությունները: Հասարակության վերնախավի իրավական կարգավճակը: Քաղաքային բնակչությունը: Գյուղական բնակչության դասը: Սմերդների, իզգոյների և զակուպների իրավական կարգավիճակը: Ստրուկներ և ճորտեր:

Հին Ռուսիայի իրավունքի աղբյուրները: Ռուսիայի և Բյուզանդիայի նորմատիվ պայմանագրերը: Սովորույթային իրավունքի դերը: Վլադիմիր Սվետոսլավի և Յարոսլավ Վլադիմիրովիչի եկեղեցական կանոնադրությունները (X-XI դդ.):

Բյուզանդական իրավունքի ռեցեպցիան: «Ռուսկայա Պրավդան» որպես Հին Ռուսիայի առաջին օրենքների ժողովածու: «Ռուսկայա Պրավդայի» երեք հրատարակությունները՝ Կրատկայա, Պրոստրաննայա և Սոկրաշյոննայա (կրճատված): «Ռուսկայա Պրավդայի» կառուցվածքը և առանձնահատկությունները: «Ռուսկայա Պրավդայի» քաղաքացիական իրավունքը: Ընտանեկան և ժառանգական իրավունքը: Հանցագործությունների և պատիժների համակարգը ըստ «Ռուսկայա Պրավդայի»: Դատը և դատավարությունը ըստ «Ռուսկայա Պրավդայի»:

<u>**ա) Բազային գրականություն:**</u>


1. **Исаев И. А История государства и прав России. Уч.пос. для бакалавров.-М.: Проспект, 2025**
2. Исаев, И. А. История государства и права России : учебник / И.А. Исаев. — 4-е изд., стер. — Москва : Норма : ИНФРА-М, 2024
3. История государства и права России : учебник / И. А. Исаев. — 4-е изд., стер. — М.: Норма : ИНФРА-М, 2019
4. История государства и права России: учебник/ В.М.Клеандрова,Р.С.Мулукаев., (под ред. Ю.П. Титова- 2-е изд.перераб и доп. М.:Проспект, 2012


<u>**բ) Հիմնական գրականություն**</u>


1. История государства и права России : учебник для вузов / В. Ф. Калина, Г. Ю. Курскова. — 3-е изд., испр. и доп. — Москва : Издательство Юрайт, **2024.**
2. История отечественного государства и права в 2 частях: учебник для академического бакалавриата / под ред. О.И.Чистякова / О. И. Чистяков, Т. Е. Новицкая, Л. В. Дюков и др. — Издательство Юрайт; ИД Юрайт М, 2016
3. Хрестоматия по истории отечественного государства и права ... для академического бакалавриата / О. И. Чистяков, Г. А. Кутьина. — 3-е изд., испр. и доп. М.: Изд. Юрайт, 2019
4. История государства и права России. Учебное пособие Исаев И.А.-М.:Проспект, 2015
5. Отечественное законодательство IX-XIX века. Пособие для семинаров /Под ред. О.И. Чистякова. М., 2000.
6. Практикум по дисциплине «История государства и права России» (часть I) / авт.-сост. канд. ист. наук О. А. Голикова. Новокузнецк:ФКОУ ВПО Кузбасский институт ФСИН России, 2015.


<u>**գ) Լրացուցիչ գրականություն**</u>


1. История отечественного государства и права : учеб. пособие для подготовки к кандидатскому экзамену / И.А. Исаев. — М. : Норма : ИНФРА-М, 2017.
2. Вишневский А.А. Киевская Русь: введение христианства и проблема рецепции византийского церковного права // Государство и право. 1992. № 4.
3. Карамзин Н.М. История государства Российского: В 4 т. М., 1988.
4. Вернадский Г.В. Киевская Русь. М., 1996.


<u>**դ) Էլեկտրոնային ռեսուրս**</u>

1. Калина, Н.Ф. История отечественного государства и права [Электронный ресурс]: учебник и практикум для прикладного бакалавриата / Н.Ф.Калина, Г.Ю.Курскова; ЭБС Юрайт. – М.: Юрайт, 2015. https://www.biblio-online.ru/bcode/433195

## Թեմա 2. Ռուսիայի պետությունն ու իրավունքը մասնատման ժամանակաշրջանում (XII - XIV դարեր)

Կիևյան Ռուսիայի կազմալուծումը. հիմնական գործոնները և պատճառները: Ավատատիրական պետությունների կոնգլոմերատ. Ռոստով-Սուզդալյան, Սմոլենսկի, Ռյազանսկի, Մուրոմսկի, Գալիցկո-Վալինսկի, Նովգորոդյան հողեր և այլն:

Վլադիմիր-Սուզդալյան հողի սոցիալ-քաղաքական զարգացման առանձնահատկությունները: Գալիցկո-Վոլինսկու հողի սոցիալ-քաղաքական զարգացման առանձնահատկությունները: Նովգորոդյան և Պսկովյան պետությունների պետական և հասարակական կարգի առանձնահատկությունները: «Պարոն Մեծ Նովգորոդի» կարգավիճակը: Նովգորոդի և Պսկովի պետական իշխանության և կառավարման մարմինները: Վեչեյի ժողովը որպես ներկայացուցչական և օրենսդիր մարմին: Պոսադնիկի՝ գերագույն պաշտանական անձի լիազորությունները: Հազարապետի և արքեպիսկոպոսի իրավասությունները: Իշխանի կարգավիճակը և գործառույթները:

Ռուսական իրավունքի աղբյուրները մասնատման ժամանակահատվածում: Նովգորոդի դատական գիրը (XV դ.) ՝ ընդհանուր բնութագիր: Պսկովյան դատական գիրը (XV դ.)՝ կառուցվածքը և խմբագրությունները: Քրեական իրավունքը Պսկովի դատական գրի համաձայն: Քաղաքացիական իրավունքը Պսկովի դատական գրի համաձայն: Ամուսնաընտանեկան իրավունքը: Դատական համակարգը և դատավարությունը Պսկովի դատական գրի համաձայն:

<u>**ա) Բազային գրականություն:**</u>

1. **Исаев И. А История государства и прав России. Уч.пос. для бакалавров.-М.: Проспект, 2025**
2. Исаев, И. А. История государства и права России : учебник / И.А. Исаев. — 4-е изд., стер. — Москва : Норма : ИНФРА-М, 2024
3. История государства и права России : учебник / И. А. Исаев. — 4-е изд., стер. — М.: Норма : ИНФРА-М, 2019
4. История государства и права России: учебник/ В.М.Клеандрова,Р.С.Мулукаев., (под ред. Ю.П. Титова- 2-е изд.перераб и доп. М.:Проспект, 2012

<u>**բ) Հիմնական գրականություն**</u>

1. История государства и права России : учебник для вузов / В. Ф. Калина, Г. Ю. Курскова. — 3-е изд., испр. и доп. — Москва : Издательство Юрайт, **2024.**
2. История отечественного государства и права в 2 частях: учебник для академического бакалавриата / под ред. О.И.Чистякова / О. И. Чистяков, Т. Е. Новицкая, Л. В. Дюков и др. — Издательство Юрайт; ИД Юрайт М, 2016

3. Хрестоматия по истории отечественного государства и права ... для академического бакалавриата / О. И. Чистяков, Г. А. Кутьина. — 3-е изд., испр. и доп. М.: Изд. Юрайт, 2019
4. История государства и права России. Учебное пособие Исаев И.А.-М.:Проспект, 2015
5. Отечественное законодательство IX-XIX века. Пособие для семинаров /Под ред. О.И. Чистякова. М., 2000.
6. Юшков С.В. История государства и права России (IX-XIX вв.). Ростов н/Д, 2003.
7. Практикум по дисциплине «История государства и права России» (часть I) / авт.-сост. канд. ист. наук О. А. Голикова. Новокузнецк:ФКОУ ВПО Кузбасский институт ФСИН России, 2015.

г) Լրացուցիչ գրականություն

1. История отечественного государства и права : учеб. пособие для подготовки к кандидатскому экзамену / И.А. Исаев. — М. : Норма : ИНФРА-М, 2017.
2. Алексеев Ю.Г. Псковская судная грамота и её время. Л., 1980.
3. Карамзин Н.М. История государства Российского: В 4 т. М., 1988.

դ) Էլեկտրոնային

1. Калина, Н.Ф. История отечественного государства и права [Электронный ресурс]: учебник и практикум для прикладного бакалавриата / Н.Ф.Калина, Г.Ю.Курскова; ЭБС Юрайт. – М.: Юрайт, 2015. https://www.biblio-online.ru/bcode/433195

## Թեմա 3. Ռուսիայի պետությունն ու իրավունքը կենտրոնացված Մոսկովյան պետության և դասային-ներկայացուցչական միապետության ժամանակաշրջաններում:

*Մոսկովյան պետություն:* Մոսկովյան իշխանությունը որպես ապագա միասնական պետության կենտրոն: Մոսկովյան կենտրոնացված պետության պետական և հասարակական կարգի առանձնահատկությունները: Պետության գլուխը. Մեծ իշխանի կարգավիճակի հիմնական փոփոխությունները: Բոյարական Դուման որպես կառավարման կենտրոնական մարմին: Դումայի կազմը և իրավասությունը: «Պրիկազները» /գերատեսչությունները/ որպես կենտրոնական ճուղային մարմինների համակարգ: Մեծ պալատի պրիկազ, Մեծ Գանձարանի պրիկազ, Դեսպանական պրիկազ, Պաշտոնների նշանակման պրիկազ, Հետախուզական պրիկազ, Յամսկոյ պրիկազ և այլն: Մոսկովյան պետության տեղական կառավարումը: Մոսկովյան պետության իրավունքի աղբյուրները: 1497-ի Դատական օրենսգիրք. ընդհանուր նկարագրություն:

*Դասային-ներկայացուցչական միապետություն*: Միապետի կարգավիճակը: Ինքնակալ կառավարման ձևի հաստատումը: Իվան Ահեղի պետական բարեփոխումները: Բոյարական Դումայի հզորության նվազեցումը: «Օպրիչնինայի» շրջանը: Իշխանական և բոյարական հայրենակալվածքների բռնագրավումը: Նոր ազնվականության դերի ուժեղացումը: Զեմսկու Ժողովը որպես գերագույն

ներկայացուցչական մարմին: Զեմսկու Ժողովի կառուցվածքը, կազմը և իրավասությունը: Պրիկազների (գերատեսչությունների) զարգացումը՝ հատուկ տարածքային պրիկազներ:

Հասարակական կարգ: Ավատատիրաիան վերնախավի հիմնական խմբերը և դրանց առճակատումը: Քաղաքային բնակչություն կարգավիճակը: Գյուղացիների կարգավիճակը: Ճորտատիրական իրավունքի ներդրումը՝ հիմնական փուլերը և առանձնահատկությունները:

1649 թվ. «Սոբորնոյե Ուլոժենիյե» որպես ժամանակաշրջանի իրավունքի հիմնական աղբյուր՝ ստեղծման պատմությունը և աղբյուրները: «Սոբորնոյե Ուլոժենիյայի» կառուցվածքը: Հանցագործությունների և պատիժների համակարգը «Սոբորնոյե Ուլոժենիայի» համաձայն: Դատը և դատավարությունը «Սոբորնոյե Ուլոժենիայի» համաձայն: Քաղաքացիական իրավունքը «Սոբորնոյե Ուլոժենիայի» համաձայն:

**<u>ա) Բազային գրականություն:</u>**


1. **Исаев И. А История государства и прав России. Уч.пос. для бакалавров.-М.: Проспект, 2025**
2. Исаев, И. А. История государства и права России : учебник / И.А. Исаев. — 4-е изд., стер. — Москва : Норма : ИНФРА-М, 2024
3. История государства и права России : учебник / И. А. Исаев. — 4-е изд., стер. — М.: Норма : ИНФРА-М, 2019
4. История государства и права России: учебник/ В.М.Клеандрова,Р.С.Мулукаев., (под ред. Ю.П. Титова- 2-е изд.перераб и доп. М.:Проспект, 2012


<u>բ) Հիմնական գրականություն</u>


1. История государства и права России : учебник для вузов / В. Ф. Калина, Г. Ю. Курскова. — 3-е изд., испр. и доп. — Москва : Издательство Юрайт, **2024.**
2. История отечественного государства и права в 2 частях: учебник для академического бакалавриата / под ред. О.И.Чистякова / О. И. Чистяков, Т. Е. Новицкая, Л. В. Дюков и др. — Издательство Юрайт; ИД Юрайт М, 2016
3. Хрестоматия по истории отечественного государства и права ... для академического бакалавриата / О. И. Чистяков, Г. А. Кутьина. — 3-е изд., испр. и доп. М.: Изд. Юрайт, 2019
4. История государства и права России. Учебное пособие Исаев И.А.-М.:Проспект, 2015
5. Отечественное законодательство IX-XIX века. Пособие для семинаров /Под ред. О.И. Чистякова. М., 2000.
6. Юшков С.В. История государства и права России (IX-XIX вв.). Ростов н/Д, 2003.
7. Практикум по дисциплине «История государства и права России» (часть I) / авт.-сост. канд. ист. наук О. А. Голикова. Новокузнецк:ФКОУ ВПО Кузбасский институт ФСИН России, 2015.


<u>գ) Լրացուցիչ գրականություն</u>


1. История отечественного государства и права : учеб. пособие для подготовки к кандидатскому экзамену / И.А. Исаев. — М. : Норма : ИНФРА-М, 2017.

2. Карамзин Н.М. История государства Российского: В 4 т. М., 1988.
3. Законодательство периода образования и укрепления Русского централизованного государства - М., 1985.

**դ) Էլեկտրոնային ռեսուրս**

1. Калина, Н.Ф. История отечественного государства и права [Электронный ресурс]: учебник и практикум для прикладного бакалавриата / Н.Ф.Калина, Г.Ю.Курскова; ЭБС Юрайт. – М.: Юрайт, 2015. https://www.biblio-online.ru/bcode/433195
2. Информационно-правовой портал законодательства РФ https://garant.ru

## Թեմա 4. Ռուսաստանի պետությունն ու իրավունքը բացարձակ միապետության ձևավորման և զարգացման ժամանակաշրջանում ( XVII- XVIII դդ.)

Պետրոս Առաջինի պետաիրավական և հասարակական կարգի բարեփոխումների հիմնական ուղղությունները և ընդհանուր բնութագիրը:

Կառավարական Սենատը որպես գերագույն և վերգերատեսչական մարմին: Սենատի ստեղծման պատմությունը և կազմը: Սենատին կից Գեներալ-դատախազի և Օբեր-դատախազի պաշտոնները: Պրիկազների համակարգի լուծարումը և Կոլեգիաների համակարգի ստեղծումը: Արտաքին գործերի կոլեգիա, Առևտրական կոլեգիա, Մանուֆակտուր-կոլեգիա (արդյունաբերական), Ռազմական և Ծովակալության կոլեգիա, Արդարադատական կոլեգիա, Վերստուգիչ կոլեգիա և այլ: Կոլեգիաների ղեկավար կազմը, գործունեության կարգը և լիազորությունները: Ֆիսկալիտետի և դատախազության հիմնադրումը: Ռազմական բարեփոխումները:

Հասարակական կարգը բացարձակ միապետության ժամանակ: Ազնվականության իրավական կարգավիճակը և 1714 թ. Միաժառանգության մասին հրամանագիրը: 1722 թ. «Աստիճանների ցուցակը» և նրա հեղափոխական նշանակությունը պետական ծառայության ոլորտում: Նոր պաշտոնների և աստիճանների համակարգը:

Քաղաքային բնակչությունը՝ ազնվականներ, կանոնավոր քաղաքացիներ և «սև մարդիկ»: Կանոնավոր քաղաքացիների բաժանումը երկու գիլդիայի:

Գյուղացիների կարգավիճակը՝ կալվածատիրական գյուղացիներ, պետական գյուղացիներ, «տնտեսական» գյուղացիներ:

Իրավունքի հիմնական աղբյուրները բացարձակ միապետության ժամանակ: Քաղաքացիական իրավունքի առանձնահատկությունները բացարձակ միապետության ժամանակ, նոր ինստիտուտների ստեղծումը: Ամուսնաընտանեկան իրավունքի նորամուծությունները: Քրեական իրավունքը Պետրոս Առաջինի օրոք՝ 1716 թ. «Զինվորական օրենքներ»: Նոր հանցագործությունների և պատիժների համակարգը:

**ա) Բազային գրականություն:**

**1. Исаев И. А История государства и прав России. Уч.пос. для бакалавров.-М.: Проспект, 2025**

2. Исаев, И. А. История государства и права России : учебник / И.А. Исаев. — 4-е изд., стер. — Москва : Норма : ИНФРА-М, 2024
3. История государства и права России : учебник / И. А. Исаев. — 4-е изд., стер. — М.: Норма : ИНФРА-М, 2019
4. История государства и права России: учебник/ В.М.Клеандрова,Р.С.Мулукаев., (под ред. Ю.П. Титова- 2-е изд.перераб и доп. М.:Проспект, 2012

**բ) Հիմնական գրականություն**

1. История государства и права России : учебник для вузов / В. Ф. Калина, Г. Ю. Курскова. — 3-е изд., испр. и доп. — Москва : Издательство Юрайт, **2024.**
2. История отечественного государства и права в 2 частях: учебник для академического бакалавриата / под ред. О.И.Чистякова / О. И. Чистяков, Т. Е. Новицкая, Л. В. Дюков и др. — Издательство Юрайт; ИД Юрайт М, 2016
3. Хрестоматия по истории отечественного государства и права ... для академического бакалавриата / О. И. Чистяков, Г. А. Кутьина. — 3-е изд., испр. и доп. М.: Изд. Юрайт, 2019
4. История государства и права России. Учебное пособие Исаев И.А.-М.:Проспект, 2015
5. Отечественное законодательство IX-XIX века. Пособие для семинаров /Под ред. О.И. Чистякова. М., 2000.
6. Вернадский Г.В. Очерк истории права русского государства. XVIII-XIX вв. (период империи). М., 1998.
7. Юшков С.В. История государства и права России (IX-XIX вв.). Ростов н/Д, 2003.
8. Практикум по дисциплине «История государства и права России» (часть I) / авт.-сост. канд. ист. наук О. А. Голикова. Новокузнецк:ФКОУ ВПО Кузбасский институт ФСИН России, 2015.

**գ) Լրացուցիչ գրականություն**

1. **Исаев И. А История государства и прав России. Уч.пос. для бакалавров.-М.: Проспект, 2025**
2. История отечественного государства и права : учеб. пособие для подготовки к кандидатскому экзамену / И.А. Исаев. — М. : Норма : ИНФРА-М, 2017.
3. Бушуев, С.В. История государства Российского. Книга 2. XVII-XVIII вв.: Историко-библиографические очерки. Новосиб.: Сиб. хронограф, 2012.
4. Анисимов Е.В. Государственные преобразования и самодержавие Петра Великого. СПб., 1997.
5. Карамзин Н.М. История государства Российского: В 4 т. М., 1988.

**դ) Էլեկտրոնային ռեսուրս**

1. Калина, Н.Ф. История отечественного государства и права [Электронный ресурс]: учебник и практикум для прикладного бакалавриата / Н.Ф.Калина, Г.Ю.Курскова; ЭБС Юрайт. – М.: Юрайт, 2015. https://www.biblio-online.ru/bcode/433195
2. Информационно-правовой портал законодательства РФ https://garant.ru

**Մոդուլ 2**

### Թեմա 5. Ռուսաստանի պետությունն ու իրավունքը բուրժուադեմոկրատական բարեփոխումների ժամանակաշրջանում (XIX-րդ դարի երկրորդ կես, XX դարի առաջին տասնամյակ)

19-րդ դարի ռուսական օրենսդրության կոդիֆիկացիա: Միխայիլ Սպերանսկու հիկանական դերը և ծավալած աշխատանքները: «Ռուսական կայսրության գործող օրենքների ժողովածույի» ստեղծումը: «Ռուսական կայսրության օրենքների ամբողջական ժամանակագրական ժողովածուն»: «Քրեական և ուղղիչ պատիժների մասին» օրենսգիրքը:

Ալեքսանդր 2–ի մեծ պետաիրավական բարեփոխումների բնութագիրը: Ճորտատիրական իրավունքի վերացումը (1861թ.) (Գյուղացիական բարեփոխումը): Ազատագրված գյուղացիների իրավական կարգավիճակը. Դատական բարեփոխումները: Համաշխարհային դատարանների ստեղծումը: Երդվյալ ատենակալների ինստիտուտի ներդրումը: Զեմսկու և քաղաքային բարեփոխումների իրականացումը: Ինքնակառավարման ընտրովի մարմինների հիմնադրումը: Փաստաբանության և նոտարիատի ինստիտուտի ներդրումը: Բարեփոխումները կրթության ոլորտում: Ռազմական բարեփոխումներ:

1906 թվականի Ագրարային (Ստոլիպինի) բարեփոխումը: Պետական կարգի բարեփոխումը և Սահմանադրական միապետության անցնելու միտումները: 1905 թվականի հոկտեմբերի 17-ի «Հասարակական կարգի բարելավման մասին» մանիֆեստը. իրավական բնութագիրը և քաղաքական նշանակությունը: 1906 թ. ապրիլի «Հիմնական պետական օրենքները» որպես Ռուսաստանի առաջին փաստացի սահմանադրություն՝ ընդհանուր բնութագիր: Ռուսաստանի կայսրի կարգավիճակը 1906 թ. «Հիմնական օրենքների համաձայն»: Ռուսաստանի Պետական Դումայի և Պետական Խորհրդի իրավական կարգավիճակը:

**<u>ա) Բազային գրականություն:</u>**


1. **Исаев И. А История государства и прав России. Уч.пос. для бакалавров.-М.: Проспект, 2025**
2. Исаев, И. А. История государства и права России : учебник / И.А. Исаев. — 4-е изд., стер. — Москва : Норма : ИНФРА-М, 2024
3. История государства и права России : учебник / И. А. Исаев. — 4-е изд., стер. — М.: Норма : ИНФРА-М, 2019
4. История государства и права России: учебник/ В.М.Клеандрова,Р.С.Мулукаев., (под ред. Ю.П. Титова- 2-е изд.перераб и доп. М.:Проспект, 2012


**<u>բ) Հիմնական գրականություն</u>**


1. История государства и права России : учебник для вузов / В. Ф. Калина, Г. Ю. Курскова. — 3-е изд., испр. и доп. — Москва : Издательство Юрайт, **2024.**
2. История отечественного государства и права в 2 частях: учебник для академического бакалавриата / под ред. О.И.Чистякова / О. И. Чистяков, Т. Е. Новицкая, Л. В. Дюков и др. — Издательство Юрайт; ИД Юрайт М, 2016

3. Хрестоматия по истории отечественного государства и права ... для академического бакалавриата / О. И. Чистяков, Г. А. Кутьина. — 3-е изд., испр. и доп. М.: Изд. Юрайт, 2019
4. История государства и права России. Учебное пособие Исаев И.А.-М.:Проспект, 2015
5. Отечественное законодательство IX-XIX века. Пособие для семинаров /Под ред. О.И. Чистякова. М., 2000.
6. Юшков С.В. История государства и права России (IX-XIX вв.). Ростов н/Д, 2003.
7. Практикум по дисциплине «История государства и права России» (часть I) / авт.-сост. канд. ист. наук О. А. Голикова. Новокузнецк:ФКОУ ВПО Кузбасский институт ФСИН России, 2015.
8. Ռուսաստանի պատմության հիմնահարցեր (XIX դար) Մուրադյան Մ. Ա. Բուհական դասագիրք, խմբ.՝ Է.Գ. Մինասյան, ԵՊՀ հրատ., 2011

## գ) Լրացուցիչ գրականություն

1. История отечественного государства и права : учеб. пособие для подготовки к кандидатскому экзамену / И.А. Исаев. — М. : Норма : ИНФРА-М, 2017.
2. Туманова А.С. Самодержавие и общественные организации в России. 1905-1917 годы. Тамбов, 2002.
3. Шумилов М.М. Местное управление и центральная власть в России в 50 – начале 80-х годов XIX в. М., 1991.

## դ) Էլեկտրոնային ռեսուրս

1. Калина, Н.Ф. История отечественного государства и права [Электронный ресурс]: учебник и практикум для прикладного бакалавриата / Н.Ф.Калина, Г.Ю.Курскова; ЭБС Юрайт. – М.: Юрайт, 2015. https://www.biblio-online.ru/bcode/433195
2. Информационно-правовой портал законодательства РФ https://garant.ru
3. Справочная правовая система РФ https:// www.consultant.ru

## ե) Ցուցադրելի նյութեր

1. Սլայդային (հեղինակային) PPT պրեզենտացիաներ դասընթացի թեմաներով:

## Թեմա 6. Ռուսաստանի պետությունը և իրավունքը հեղափոխությունների և խորհրդային իշխանության ձևավորման ժամանակաշրջանում (XX դ. առաջին քառորդ)

Ռուսաստանի պետությունը և իրավունքը փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխությունից հետո (Երկիշխանություն): Ժամանակավոր կառավարության կարգավիճակը: Պետրոգրադյան բանվորների և զինվորական պատգամավորների խորհուրդի կարգավիճակը: Պետական ապարատի վերակառուցումը: Դատական համակարգի հիմնական փոփոխությունները:

Ժամանակավոր կառավարության քաղաքականությունն ու օրենսդրական ակտերը: Համընդհանուր քաղաքական և քրեական համաներումը: Ժամանակավոր կառավարության հիմնական թերացումները:

1917 թվականի բոլշևիկյան ապստամբությունը (կամ հոկտեմբերյան հեղափոխությունը) և Խորհրդային ռուսական պետության ստեղծումը: Աշխատավորների և զինվորների պատգամավորների խորհուրդների Համառուսական երկրորդ համագումարի հիմնական հրամանագրերը: Դեկրետ Խորհուրդների իշխանության լիակատարության մասին: Հաշտության մասին դեկրետ: Դեկրետ հողի մասին: Համառուսական Խորհուրդների համագումարը: Համառուսական կենտրոնական գործադիր կոմիտեն: Ժողովրդական կոմիսարների Խորհուրդը (ԺԿԽ): Համառուսական արտակարգ հանձնաժողով: Տեղական իշխանությունը: Ոստիկանական և դատական համակարգի վերակազմակերպումը:

Խորհրդային իրավունքի ձևավորումը 1917-1920 թթ. 1918 թվ. Խորհրդային Ռուսաստանի Սահմանադրության հիմնական դրույթները: Քաղաքացիական իրավունք: Ամուսնաընտանեկան և ժառանգական իրավունք: Աշխատանքային իրավունքի նորամուծությունները: Քրեական իրավունք և քրեական դատավարություն: Դատական և իրավապահ համակարգի նոր ինստիտուցիոնալ կառուցվածքը:

1922 թ. դեկտեմբերի 30-ի ԽՍՀՄ-ի հիմնադրումը: ԽՍՀՄ-ի Խորհրդների համագումարը: ԽՍՀՄ-ի կազմավորման մասին Պայմանագրի և Հռչակագրի առանձնահատկությունները:1924 թվականի համամիութենականՍահմանադրություն մշակումը և ընդունումը: ԽՍՀՄ-ի Սահմանադրություն կառուցվածքը և ընդհանուր բնութագիրը:

**<u>ա) Բազային գրականություն:</u>**


1. **Исаев И. А История государства и прав России. Уч.пос. для бакалавров.-М.: Проспект, 2025**
2. Исаев, И. А. История государства и права России : учебник / И.А. Исаев. — 4-е изд., стер. — Москва : Норма : ИНФРА-М, 2024
3. История государства и права России : учебник / И. А. Исаев. — 4-е изд., стер. — М.: Норма : ИНФРА-М, 2019
4. История государства и права России: учебник/ В.М.Клеандрова,Р.С.Мулукаев., (под ред. Ю.П. Титова- 2-е изд.перераб и доп. М.:Проспект, 2012


<u>բ) Հիմնական գրականություն</u>


1. История государства и права России : учебник для вузов / В. Ф. Калина, Г. Ю. Курскова. — 3-е изд., испр. и доп. — Москва : Издательство Юрайт, **2024.**
2. История отечественного государства и права в 2 частях: учебник для академического бакалавриата / под ред. О.И.Чистякова / О. И. Чистяков, Т. Е. Новицкая, Л. В. Дюков и др. — Издательство Юрайт; ИД Юрайт М, 2016
3. Хрестоматия по истории отечественного государства и права ... для академического бакалавриата / О. И. Чистяков, Г. А. Кутьина. — 3-е изд., испр. и доп. М.: Изд. Юрайт, 2019
4. История государства и права России. Учебное пособие Исаев И.А.-М.:Проспект, 2015


<u>գ) Լրացուցիչ գրականություն</u>

1. История отечественного государства и права : учеб. пособие для подготовки к кандидатскому экзамену / И.А. Исаев. — М. : Норма : ИНФРА-М, 2017.
2. Туманова А.С. Самодержавие и общественные организации в России. 1905-1917 годы. Тамбов, 2002.

**դ) Էլեկտրոնային ռեսուրս**

1. Калина, Н.Ф. История отечественного государства и права [Электронный ресурс]: учебник и практикум для прикладного бакалавриата / Н.Ф.Калина, Г.Ю.Курскова; ЭБС Юрайт. – М.: Юрайт, 2015. https://www.biblio-online.ru/bcode/433195
2. Информационно-правовой портал законодательства РФ https://garant.ru
3. Справочная правовая система РФ https:// www.consultant.ru

**ե) Ցուցադրելի նյութեր**

1. Սլայդային (հեղինակային) PPT պրեզենտացիաներ դասընթացի թեմաներով:

**Թեմա 7. Խորհրդային պետությունն ու իրավունքը ՆԵՊ-ի օրոք (1921-1928 թթ.) և 30-ականների ժամանակաշրջանում:**

ՆԵՊ-ի ընդհանուր բնութագիրը: Պարենային մասնատրման փոխարինումը պարենային հարկով: Մասնավոր ձեռնարկատիրական գործունեության օրինականացումը: Գյուղական տնտեսության և տնայնագործնունեության ապրանքների ազատ փոխանակման, վաճառքի և գնման թույլտվությունը:

Խորհրդային իրավունքի առանձնահատկությունները ՆԵՊ-ի ժամանակ: Նոր տնտեսական քաղաքականության ազդեցությունը խորհրդային աշխատանքային, քաղաքացիական, հողային իրավունքի վրա: Աշխատանքային իրավունք: Հողային իրավունք: Քաղաքացիական իրավունք և դատավարություն: Քրեական իրավունք և դատավարություն: Ամուսնաընտանեկան իրավունք:

30-ն թվականների հրամավարչական համակարգի ձևավորումը: Պետական մարմինների համակարգը: Արդյունաբերականացման և կոլեկտիվիզացման տեմպերի խթանումը: Կուլակաթափություն: 1937 թվականի քաղաքական ռեպռեսիաները:

Քաղաքացիական իրավունքի զարգացումը: Ընդհանուր և լրկան համաձայնագրերի համակարգը: Հողային իրավունք: Ընտանեկան իրավունքի զարգացումը: Աշխատանքային իրավունքը: Միութենական քրեական և դատավարական օրենսդրության զարգացման միտումները: Պետական հանցագործությունների դեմ պայքարի ուժեղացումը: Ռեպրեսիվ տարրերի ուժեղացումը, պատիժների խստացումը: Դատական և իրավապահ համակարգը:

**ա) Բազային գրականություն:**

1. Исаев, И. А. История государства и права России : учебник / И.А. Исаев. — 4-е изд., стер. — Москва : Норма : ИНФРА-М, 2024

2. История государства и права России : учебник / И. А. Исаев. — 4-е изд., стер. — М.: Норма : ИНФРА-М, 2019
3. История государства и права России: учебник/ В.М.Клеандрова,Р.С.Мулукаев., (под ред. Ю.П. Титова- 2-е изд.перераб и доп. М.:Проспект, 2012

բ) Հիմնական գրականություն

1. **Исаев И. А История государства и прав России. Уч.пос. для бакалавров.-М.: Проспект, 2025**
2. История государства и права России : учебник для вузов / В. Ф. Калина, Г. Ю. Курскова. — 3-е изд., испр. и доп. — Москва : Издательство Юрайт, **2024.**
3. История отечественного государства и права в 2 частях: учебник для академического бакалавриата / под ред. О.И.Чистякова / О. И. Чистяков, Т. Е. Новицкая, Л. В. Дюков и др. — Издательство Юрайт; ИД Юрайт М, 2016
4. Хрестоматия по истории отечественного государства и права ... для академического бакалавриата / О. И. Чистяков, Г. А. Кутьина. — 3-е изд., испр. и доп. М.: Изд. Юрайт, 2019
5. История государства и права России. Учебное пособие Исаев И.А.-М.:Проспект, 2015

գ) Լրացուցիչ գրականություն

1. История отечественного государства и права : учеб. пособие для подготовки к кандидатскому экзамену / И.А. Исаев. — М. : Норма : ИНФРА-М, 2017.

դ) Էլեկտրոնային ռեսուրս

1. Калина, Н.Ф. История отечественного государства и права [Электронный ресурс]: учебник и практикум для прикладного бакалавриата / Н.Ф.Калина, Г.Ю.Курскова; ЭБС Юрайт. – М.: Юрайт, 2015. https://www.biblio-online.ru/bcode/433195
2. Информационно-правовой портал законодательства РФ https://garant.ru
3. Справочная правовая система РФ https:// www.consultant.ru

ե) Ցուցադրելի նյութեր

1. Սլայդային (հեղինակային) PPT պրեզենտացիաներ դասընթացի թեմաներով:

**Թեմա 8. Խորհրդային պետությունն ու իրավունքը 1950-1970 թվականների շրջանում. «Լճացում»:**

Ստալինի անհատականության պաշտամունքի վերացումը: Պետական ապարատի փոխակերպումները: Հասարակական հարաբերությունների լիբերալիզացիայի քաղաքականությունը:Քաղաքական ռեպրեսիաների զոհերի ռեաբիլիտացիա: Աշխատուժի մոբիլիզացիայի վերացումը: 1958-ի ԽՍՀՄ քրեական օրենսդրության նոր հիմունքների ընդունումը: 1958-ի ԽՍՀՄ և միության հանրապետությունների քրեական դատավարության հիմունքները: Հիմնական փոփոխությունները հողային և կոլտնտեսական իրավունքում: ԽՍՀՄ և միութենական հանրապետությունների քաղաքացիական օրենսդրության հիմունքներ (1961):

1970-կանների երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման հակասությունները: Տնտեսական և քաղաքական ճգնաժամերի աճը `«Լճացում»: ԽՍՀՄ 1977-թվ. Սահմանադրության մշակումը և ընդունումը: Պետական մարմինների համակարգը Սահմանադրության համաձայն: Ֆեդերալիզմի սկզբունքների սահմանափակումները: Քրեական և վարչական իրավունքի զարգացման հիմնական ուղղությունները: Աշխատանքային օրենսդրություն: Կենսաթոշակային օրենսդրության փոփոխությունները: Ընտանեկան իրավունքի հիմունքները: Քաղաքացիական իրավունքի զարգացման միտումները: Սոցիալիստական սեփականության: Դատական և իրավապահ համակարգը:

<u>**ա) Բազային գրականություն:**</u>


1. **Исаев И. А История государства и прав России. Уч.пос. для бакалавров.-М.: Проспект, 2025**
2. Исаев, И. А. История государства и права России : учебник / И.А. Исаев. — 4-е изд., стер. — Москва : Норма : ИНФРА-М, 2024
3. История государства и права России : учебник / И. А. Исаев. — 4-е изд., стер. — М.: Норма : ИНФРА-М, 2019
4. История государства и права России: учебник/ В.М.Клеандрова,Р.С.Мулукаев., (под ред. Ю.П. Титова- 2-е изд.перераб и доп. М.:Проспект, 2012


<u>**բ) Հիմնական գրականություն**</u>


1. История государства и права России : учебник для вузов / В. Ф. Калина, Г. Ю. Курскова. — 3-е изд., испр. и доп. — Москва : Издательство Юрайт, **2024.**
2. История отечественного государства и права в 2 частях: учебник для академического бакалавриата / под ред. О.И.Чистякова / О. И. Чистяков, Т. Е. Новицкая, Л. В. Дюков и др. — Издательство Юрайт; ИД Юрайт М, 2016
3. Хрестоматия по истории отечественного государства и права ... для академического бакалавриата / О. И. Чистяков, Г. А. Кутьина. — 3-е изд., испр. и доп. М.: Изд. Юрайт, 2019
4. История государства и права России. Учебное пособие Исаев И.А.-М.:Проспект, 2015


<u>**գ) Լրացուցիչ գրականություն**</u>


1. История отечественного государства и права : учеб. пособие для подготовки к кандидатскому экзамену / И.А. Исаев. — М. : Норма : ИНФРА-М, 2017.

**դ) Էլեկտրոնային ռեսուրս**

1. Калина, Н.Ф. История отечественного государства и права [Электронный ресурс]: учебник и практикум для прикладного бакалавриата / Н.Ф.Калина, Г.Ю.Курскова; ЭБС Юрайт. – М.: Юрайт, 2015. https://www.biblio-online.ru/bcode/433195
2. Информационно-правовой портал законодательства РФ https://garant.ru
3. Справочная правовая система РФ https:// www.consultant.ru

**ե) Ցուցադրելի նյութեր**

1. Սլայդային (հեղինակային) PPT պրեզենտացիաներ դասընթացի հիմնական թեմաներով:

## Թեմա 9. Ռուսաստանի պետությունը և իրավունքը «Վերակառուցման» և ԽՍՀՄ փլուզման ժամանակաշրջանում (1980-1991)

1980-ական թթ. պետաիրավական բարեփոխումները: Վերակառուցում: «Պերեստրոյկայի» գաղափարախոսությունը համաձայն Գորբաչևի 1987 թ. ԽՍՀՄ Կենտկոմի հունվարյան պլենար նիստում ներկայացված զեկույցի: Քաղաքական ռեժիմի ժողովրդավարացումը: Պետական համակարգի փախակերպումները: Կոմունիստական կուսակցության գաղափարախոսական մենաշնորհի վերացումը: ԽՍՀՄ Ժողովրդական պատգամավորների համագումարի ընտրությունները: ԽՍՀՄ նախագահի և ՌՍՖՍՀ-ի նախագահի պաշտոնների ստեղծումը: Սահմանադրական դատարանի հիմնադրումը:

Բարեփոխումները տնտեսական համակարգում: Քաղաքացիական օրենսդրության նորամուծությունները: Մասնավոր ձեռներեց գործունեության օրինականացումը: Արդյունաբերական ձեռնարկությունների մասնավորեցման մասին օրենքները: Աշխատանքային օրենսդրության նորամուծությունները: Աշխատանքային կոլեկտիվների իրավունքների ընդլայնումը: Քրեական օրենսդրության մարդասիրացումը:

1980-ականների բարեփոխումների թերությունները՝ տնտեսության անկումը, պետական մեխանիզմի քայքայումը, ֆինանսական ճգնաժամը, գնաճը: Իշխող կուսակցության ճգնաժամը: ԽՍՀՄ ապակենտրոնացումը: Միութենական նոր պայմանագիր կնքելու փորձերը: 1990 թվականի հունիսի 12-ի «Ռուսաստանի Դաշնային սոցիալիստական հանրապետության պետական ինքնիշխանության մասին» հռչակագիրը: 1991 թ. Մարտի 17-ի դրությամբ ԽՍՀՄ պահպանության հարցով հանրաքվեն: Ազգային հանրապետությունների ԽՍՀՄ-ից առանձնացման գործընթացները: 1991 թվականի դեկտեմբերի 8-ին Բելովեժյան թավուտում հանդիպումը՝ ԽՍՀՄ լուծարումը և ԱՊՀ ստեղծման մասին համաձայնագրի ստորագրումը:

**ա) Բազային գրականություն:**

1. **Исаев И. А История государства и прав России. Уч.пос. для бакалавров.-М.: Проспект, 2025**

2. Исаев, И. А. История государства и права России : учебник / И.А. Исаев. — 4-е изд., стер. — Москва : Норма : ИНФРА-М, 2024
3. История государства и права России : учебник / И. А. Исаев. — 4-е изд., стер. — М.: Норма : ИНФРА-М, 2019
4. История государства и права России: учебник/ В.М.Клеандрова,Р.С.Мулукаев., (под ред. Ю.П. Титова- 2-е изд.перераб и доп. М.:Проспект, 2012

**բ) Հիմնական գրականություն**

1. История государства и права России : учебник для вузов / В. Ф. Калина, Г. Ю. Курскова. — 3-е изд., испр. и доп. — Москва : Издательство Юрайт, **2024.**
2. История отечественного государства и права в 2 частях: учебник для академического бакалавриата / под ред. О.И.Чистякова / О. И. Чистяков, Т. Е. Новицкая, Л. В. Дюков и др. — Издательство Юрайт; ИД Юрайт М, 2016
3. Хрестоматия по истории отечественного государства и права ... для академического бакалавриата / О. И. Чистяков, Г. А. Кутьина. — 3-е изд., испр. и доп. М.: Изд. Юрайт, 2019
4. История государства и права России. Учебное пособие Исаев И.А.-М.:Проспект, 2015

**գ) Լրացուցիչ գրականություն**

1. История отечественного государства и права : учеб. пособие для подготовки к кандидатскому экзамену / И.А. Исаев. — М. : Норма : ИНФРА-М, 2017.

**դ) Էլեկտրոնային ռեսուրս**

1. Калина, Н.Ф. История отечественного государства и права [Электронный ресурс]: учебник и практикум для прикладного бакалавриата / Н.Ф.Калина, Г.Ю.Курскова; ЭБС Юрайт. – М.: Юрайт, 2015. https://www.biblio-online.ru/bcode/433195
2. Информационно-правовой портал законодательства РФ https://garant.ru
3. Справочная правовая система РФ https:// www.consultant.ru

**ե) Ցուցադրելի նյութեր**

1. Սլայդային (հեղինակային) PPT պրեզենտացիաներ դասընթացի հիմնական թեմաներով

## 11. Գիտելիքների գնահատման և ստուգման նյութերի ՖՈՆԴ

### 11.1. Սեմինարական /գործնական պարապմունքների պլաններ

**Ուշադրություն՛** Սեմինարների/ընթացիկ ստուգման շրջանակներում ուսանողների գիտելիքների գնահատման համար նախատեսված ստուգողական հարցերի ցանկը, ինչպես նաև սեմինարների ժամանակ քննարկման ներկայացվող բոլոր գործնական առաջադրանքները ձևավորվում են դասախոսի կողմից՝ սույն բաժնում շարադրված սեմինարական պարապմունքների թեմատիկ պլանների հիման վրա: Սեմինարական պարապմունքների ներկայացված պլանները (թեմաներ 1–9) սահմանում են ստուգողական հարցերի բովանդակային սահմանները ընթացիկ ստուգման բոլոր ձևերի համար

**Թեմա 1. Հին ռուսական պետությունն ու իրավունքը (Կիևյան Ռուսիա) IX-XII դարերում**

1. Հին ռուսական պետության առաջացումն ու զարգացումը. Պետության ծագման հիմնական տեսությունները (նորմանական և հակավորմանական), վարյագների դերը և 882 թ. Նովգորոդի ու Կիևի միավորումը Մեծ իշխանի հովանու ներքո:
2. Կիևյան Ռուսիայի պետական կարգը. Մեծ իշխանի իրավական կարգավիճակը, Իշխանական խորհուրդը, ֆեոդալական համագումարները (սնեմեր) և տեղական կառավարման առանձնահատկությունները:
3. Հասարակական կառուցվածքը. Բնակչության դասային բաժանումը՝ ավատատիրական վերնախավ, քաղաքային բնակչություն և գյուղացիության տարբեր խմբերի (սմերդներ, զակուպներ, իզգոյներ, խոլոպներ) իրավական կարգավիճակը:
4. Իրավունքի աղբյուրները և «Ռուսկայա Պրավդան». Ռուս-բյուզանդական պայմանագրերը, եկեղեցական կանոնադրությունները և «Ռուսկայա Պրավդայի» խմբագրությունները (Կրատկայա, Պրոստրաննայա, Սոկրաշյոննայա)՝ քաղաքացիական, ընտանեկան, քրեական իրավունքի ու դատավարության կարգավորումները:

**Թեմա 2. Ռուսիայի պետությունն ու իրավունքը մասնատման ժամանակաշրջանում (XII – XIV դարեր)**

1. Կիևյան Ռուսիայի կազմալուծումը և ավատատիրական մասնատվածությունը. Տրոհման հիմնական պատճառներն ու գործոնները, ինքնուրույն իշխանությունների և հողերի (Վլադիմիր-Սուզդալյան, ԳալիցկոՎոլինսկի, Նովգորոդյան և այլն) ձևավորումը:
2. Իշխանությունների սոցիալ-քաղաքական զարգացման մոդելները. Միապետական ուժեղ իշխանության հաստատումը Վլադիմիր-Սուզդալյան հողում և բոյարական վերնախավի ու իշխանի հակամարտությունը ԳալիցկոՎոլինսկյան հողերում:
3. Նովգորոդի և Պսկովի հանրապետական կարգը. Պետական կառավարման համակարգը, Վեչեի (ժողովի)՝ որպես օրենսդիր մարմնի դերը, Պոսադնիկի, Հազարապետի և Արքեպիսկոպոսի իրավասությունները, իշխանի պայմանագրային և սահմանափակ կարգավիճակը:
4. Իրավունքի զարգացումը և Դատական գրերը. Նովգորոդի և Պսկովի դատական գրերը

(XV դ.), սեփականության, պարտավորական իրավունք, քրեական իրավունք, դատ և դատավարություն:

**Թեմա 3. Ռուսիայի պետությունն ու իրավունքը կենտրոնացված Մոսկովյան պետության և դասային-ներկայացուցչական միապետության ժամանակաշրջաններում**

1. Մոսկովյան կենտրոնացված պետության ձևավորումը. Մեծ իշխանի կարգավիճակի փոփոխությունը, Բոյարական դուման և «պրիկազների» (գերատեսչությունների) համակարգի սկզբնավորումը, տեղական կառավարումը և 1497 թ. Համառուսական դատաստանագիրքը:
2. Դասային-ներկայացուցչական միապետությունը և Իվան Ահեղի բարեփոխումները. Ինքնակալության հաստատումը, «օպրիչնինայի» շրջանը, նոր ազնվականության դերի ուժեղացումը և Զեմսկի սոբորի (Ժողովի)՝ որպես գերագույն ներկայացուցչական մարմնի կառուցվածքն ու իրավասությունը:
3. Հասարակական կարգը և ճորտատիրության ձևավորումը. Ավատատիրական վերնախավի խմբերի առճակատումը, քաղաքային բնակչության կարգավիճակը և գյուղացիության ճորտացման իրավական հիմնական փուլերը:
4. 1649 թ. «Սոբորնոյե ուլոժենիեն» (Ժողովական կանոնագիրք). Կանոնագրքի ստեղծման պատմությունը, աղբյուրներն ու կառուցվածքը, քաղաքացիական իրավունքի, հանցագործությունների ու պատիժների համակարգի, ինչպես նաև դատարանի և դատավարության կարգավորումները:

**Թեմա 4. Ռուսաստանի պետությունն ու իրավունքը բացարձակ միապետության ձևավորման և զարգացման ժամանակաշրջանում (XVII-XVIII դդ.)**

1. Պետրոս I-ի պետական ապարատի բարեփոխումները. Կառավարական Սենատի և դրա գլխավոր դատախազի (Գեներալ-դատախազ) պաշտոնի ստեղծումը, պրիկազների փոխարինումը կոլեգիաների համակարգով, ֆիսկալիտետի և կանոնավոր բանակի հիմնադրումը:
2. Սոցիալական բարեփոխումները և պետական ծառայությունը. Ազնվականության իրավական կարգավիճակի փոփոխությունը, 1714 թ.Միաժառանգության մասին հրամանագիրը, 1722 թ. «Աստիճանների ցուցակը» (Табель о рангах) և դրա դերը ծառայողական առաջխաղացման մեջ:
3. Բնակչության դասային խմբերի կարգավիճակը. Քաղաքային բնակչության կառուցվածքը (կանոնավոր քաղաքացիներ և գիլդիաներ), գյուղացիության հիմնական խմբերը (կալվածատիրական, պետական, «տնտեսական»)
4. Իրավունքի զարգացումը և համակարգումը. Քաղաքացիական և ամուսնաընտանեկան իրավունքի նորույթները, քրեական իրավունքի խստացումն ըստ 1716 թ. «Զինվորական օրենքների» (Воинский артикул), նոր հանցատեսակներն ու պատժատեսակները:

**Թեմա 5. Ռուսաստանի պետությունն ու իրավունքը բուրժուադեմոկրատական բարեփոխումների ժամանակաշրջանում (XIX դարի երկրորդ կես, XX դարի առաջին տասնամյակ)**

1. Օրենսդրության համակարգումն ու կոդիֆիկացիան. Միխայիլ Սպերանսկու գործունեությունը, «Օրենքների ամբողջական ժողովածուի» և «Գործող օրենքների

ժողովածուի» ստեղծումը, «Քրեական և ուղղիչ պատիժների մասին» 1845 թ. Օրենսգիրքը:
2. Ալեքսանդր II-ի «Մեծ բարեփոխումները». Ճորտատիրական իրավունքի վերացումը (1861 թ.), դատական բարեփոխումը (հաշտարար դատարաններ, երդվյալ ատենակալներ, փաստաբանություն և նոտարիատ), զեմստվային, քաղաքային, կրթական ու ռազմական բարեփոխումները:
3. Ստոլիպինյան ագրարային բարեփոխումը (1906 թ.). Գյուղացիական համայնքի վերակառուցումը, հողի մասնավոր սեփականության անցման իրավական հիմքերը և տնտեսական նպատակները:
4. Անցումը սահմանադրական միապետությանը. 1905 թ. Հոկտեմբերի 17-ի Մանիֆեստի իրավական բնույթը, 1906 թ. «Հիմնական պետական օրենքները» որպես Ռուսաստանի առաջին փաստացի սահմանադրություն, կայսեր, Պետական դումայի և Պետական խորհրդի կարգավիճակը

**Թեմա 6. Ռուսաստանի պետությունը և իրավունքը հեղափոխությունների և խորհրդային իշխանության ձևավորման ժամանակաշրջանում (XX դ. Առաջին քառորդ)**
1. Երկիշխանությունը Փետրվարյան հեղափոխությունից հետո. Ժամանակավոր կառավարության և Պետրոգրադի խորհրդի կարգավիճակը, պետական ապարատի ու դատարանների վերակառուցումը, համաներման ակտերը:
2. Հոկտեմբերյան հեղափոխությունը և խորհրդային պետականության ստեղծումը. Խորհուրդների II համագումարը և առաջին դեկրետները (հողի, հաշտության, իշխանության մասին), նոր մարմինների (ԺԿԽ, ՀԿԳԿ, ՀԱՀ) ձևավորումը, միլիցիայի և դատարանների կազմավորումը:
3. Խորհրդային իրավունքի ձևավորումը (1917-1920 թթ.). ՌՍՖՍՀ 1918 թ. Սահմանադրությունը, քաղաքացիական, ամուսնաընտանեկան, աշխատանքային ու քրեական իրավունքի առաջին կարգավորումները:
4. ԽՍՀՄ կազմավորումը. 1922 թ. Դեկտեմբերի 30-ի Հռչակագիրն ու Պայմանագիրը, ԽՍՀՄ Խորհուրդների համագումարը և 1924 թ. Համամիութենական Սահմանադրությունը:

**Թեմա 7. Խորհրդային պետությունն ու իրավունքը ՆԵՊ-ի օրոք (1921-1928 թթ.) և 30-ականների ժամանակաշրջանում**
1. ՆԵՊ-ի պետաիրավական բնութագիրը. Պարենհարկի անցումը, մասնավոր ձեռնարկատիրության օրինականացումը և ապրանքների ազատ շրջանառության թույլտվությունը:
2. Խորհրդային իրավունքի առանձնահատկությունները ՆԵՊ-ի շրջանում. Նոր տնտեսական քաղաքականության ազդեցությունը քաղաքացիական, հողային, աշխատանքային, քրեական և ընտանեկան իրավունքի ճյուղերի վրա:
3. 30-ական թթ. Հրամանվարչական համակարգի ձևավորումը. Արդյունաբերականացման և կոլեկտիվացման տեմպերի խթանումը, կուլակաթափությունը և 1937 թ. Քաղաքական ռեպրեսիաները: Իրավապահ և պատժիչ մարմինների համակարգի ուժեղացումը:

4. Իրավունքի զարգացումը 30-ականներին. Ստալինյան» սահմանադրությունը: Ընդհանուր և լոկալ համաձայնագրերի համակարգը քաղիրավունքում, աշխատանքային և ընտանեկան իրավունքի ճյուղերում փոփոխությունները, պատիժների խստացումը քրեական օրենսգրքում:

**Թեմա 8. Խորհրդային պետությունն ու իրավունքը (1950-1970 թթ.)**
1. «Ձնհալի» շրջանը. Քաղաքական ռեպրեսիաների վերացում, պետական ապարատի բարեփոխումներ:
2. Օրենսդրական կոդիֆիկացիա. Քրեական և քաղաքացիական իրավունքի հիմունքների ընդունում (1958, 1961 թթ.):
3. «Լճացման» շրջանը. Տնտեսական ճգնաժամի աճ, ֆեդերալիզմի սահմանափակում:
4. 1977 թ. Սահմանադրություն. Ընդունումը, պետական մարմինների համակարգը:
5. Իրավունքի զարգացումը 70-ականներին. Քրեական, աշխատանքային, ընտանեկան իրավունք, դատական համակարգ:

**Թեմա 9. Ռուսաստանի պետությունը և իրավունքը «Վերակառուցման» և ԽՍՀՄ փլուզման ժամանակաշրջանում (1980-1991 թթ.)**
1. «Պերեստրոյկայի» (Վերակառուցման) պետաիրավական բարեփոխումները և քաղաքական ռեժիմի ժողովրդավարացումը. Գաղափարախոսությունը համաձայն Մ. Գորբաչևի 1987 թ. Զեկույցի, պետական համակարգի փոխակերպումները, կոմունիստական կուսակցության (ՍՄԿԿ) մենաշնորհի վերացումը, ԽՍՀՄ Ժողովրդական պատգամավորների համագումարի ընտրությունները, ԽՍՀՄ և ՌՍՖՍՀ նախագահների պաշտոնների ստեղծումն ու Սահմանադրական դատարանի հիմնադրումը:
2. Տնտեսական և ճյուղային իրավունքի բարեփոխումները. Քաղաքացիական օրենսդրության նորամուծությունները, մասնավոր ձեռներեցության օրինականացումը, արդյունաբերական ձեռնարկությունների մասնավորեցման մասին օրենքները, աշխատանքային օրենսդրությունը (աշխատանքային կոլեկտիվների իրավունքների ընդլայնումը) և քրեական իրավունքի մարդասիրացումը:
3. 80-ականների բարեփոխումների ճգնաժամը և ԽՍՀՄ ապակենտրոնացումը. Տնտեսության անկումը, պետական մեխանիզմի քայքայումը, ֆինանսական ճգնաժամն ու գնաճը, իշխող կուսակցության ճգնաժամը, միութենական նոր պայմանագիր կնքելու փորձերը և 1990 թ. Հունիսի 12-ի «ՌՍՖՍՀ պետական ինքնիշխանության մասին» հռչակագիրը:
4. ԽՍՀՄ փլուզումը և ԱՊՀ ստեղծումը. 1991 թ. Մարտի 17-ի ԽՍՀՄ պահպանման հարցով համամիութենական հանրաքվեն, ազգային հանրապետությունների անջատման գործընթացները, 1991 թ. Դեկտեմբերի 8-ի Բելովեժյան համաձայնագիրը, ԽՍՀՄ լուծարումը և Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) հիմն

## 11.2 Ստուգարքի հարցաշար/ գործնական առաջադրանքների թեմաների ցանկ (գիտելիքների, իմացության և կարողությունների գնահատման համար)

1. Հին Ռուսիայի առաջացումը և պետական կարգը
2. Կիևյան Ռուսիայի հասարակական կարգը
3. Կիևյան Ռուսիայի իրավունքի աղբյուրները. «Ռուսկայա Պրավդա»
4. Ք աղաքացիական իրավունքը ըստ «Ռուսկայա Պրավդայի»
5. Դատը և դատավարությունը ըստ «Ռուսկայա Պրավդայի»
6. Քրեական իրավունքը ըստ «Ռուսկայա Պրավդայի»
7. Վլադիմիր-Սուզդալյան և Գալիցկո-Վոլինսկի իշխանությունների սոցիալ-քաղաքական զարգացման առանձնահատկությունները

8. Նովգորոդի և Պսկովի հանրապետությունների սոցիալ-քաղաքական զարգացման առանձնահատկությունները և կառավարման մարմինները
9. Իրավունքի ճյուղերը Նովգորոդի և Պսկովի դատական գրերի համաձայն
10. Մոսկովյան կենտրոնացած պետության պետական և հասարակական կարգը
11. Դասային ներկայացուցչական միապետությունը Ռուսաստանում
12. «Սոբորնոյե Ուլոժենիայի» ստեղծման պատմությունը և կառուցվածքը
13. Քրեական իրավունքը «Սոբորնոյե Ուլոժենիայի» համաձայն
14. Քաղաքացիական իրավունքը «Սոբորնոյե Ուլոժենիայի» համաձայն
15. Դատը և դատավարությունը «Սոբորնոյե Ուլոժենիայի» համաձայն
16. Պետական կարգը բացարձակ միապետության ժամանակ
17. Հասարակական կարգը բացարձակ միապետության ժամանակ
18. Քաղաքացիական իրավունքը բացարձակ միապետության ժամանակ
19. Քրեական իրավունքը բացարձակ միապետության ժամանակ: «Զինվորական հոդվածներ»
20. Ճորտատիրական իրավունքի վերացումը (1861թվ. Գյուղացիական բարեփոխումը)
21. Ալեքսանդր II դատական բարեփոխումները
22. 19-րդ դարի ռուսական օրենսդրության կոդիֆիկացիան Մ. Սպերանսկու գլխավորությամբ
23. «Քրեական և ուղղիչ պատիժների օրենսգիրք» (1845) Ընդհանուր բնութագիր
24. 1905 թվ. Ագրարային բարեփոխումը (Պ.Ստոլիպինի)
25. 1905 թվ. հոկտեմբերի 17-ի «Հասարակական կարգի բարելավման մասին» մանիֆեստը. իրավական բնութագիրը և քաղաքական նշանակությունը
26. Պետական Դումայի և Պետական Խորհրդի իրավական կարգավիճակը 1906 թվ. «Հիմնական Օրենքների» համաձայն
27. Պետական և հասարակական կարգը 1917 թվ. Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունից հետո
28. 1917 թվ. հոկտեմբերյան հեղափոխությունը և Խորհուրդային պետության ստեղծումը
29. Խորհրդային իրավունքի ձևավորումը 1917-1920 թթ.՝ քաղաքացիական և քրեական իրավունք
30. Խորհրդային իրավունքի ձևավորումը 1917-1920 թթ՝ աշխատանքային և ամուսնաընտանեկան իրավունք
31. ԽՍՀՄ կազմավորումը և համախորհրդային Սահմանադրության ընդունումը
32. «ՆԷՊ»-ի ընդհանուր բնութագիրը 1921-1928 թթ.
33. Իրավունքի զարգացումը «ՆԷՊ»-ի օրոք
34. Խորհրդային օրենսդրության զարգացման հիմնական ուղղությունները 30-ական թվականներին
35. Քրեական և վարչական իրավունքի զարգացման հիմնական ուղղությունները: 1950-1970 թվականների շրջանում
36. Քրեական դատավարության հիմունքները 1950-1970 թվականների շրջանում
37. Քաղաքացիական իրավունքի զարգացման միտումները: Աշխատանքային օրենսդրությունը 1950-1970-թվականների շրջանում
38. ԽՍՀՄ 1977-թվ. Սահմանադրության մշակումը և ընդունումը: Պետական մարմինների համակարգը Սահմանադրության համաձայն:
39. Դատական և իրավապահ համակարգը 1970 թվականների շրջանում:
40. 1980-ական թվականների պետաիրավական բարեփոխումները. «Պերեստրոյկա»
41. ԽՍՀՄ փլուզման գործոնները և ՌԴ-ի հրչակումը

## 11.3 Ինքնուրույն աշխատանքի, կուրսային աշխատանքների, ռեֆերատների, զեկույցների թեմաներ

1. Կիևան Ռուսիայի պետական և հասարակական համակարգի առանձնահատկությունները
2. «Ռուսկայա Պրավդան» որպես Կիևան Ռուսիայի իրավունքի հիմնական աղբյուր
3. Հանցագործությունների և պատիժների համակարգը հին ռուսական իրավունքում
4. Նովգորոդի և Պսկովի հանրապետությունների պետական համակարգը
5. Կենտրոնացված Մոսկովյան պետության պետական ապարատի առանձնատկությունները
6. 1497 թվ. դատական օրենսգիրք. Ընդհանուր նկարագրություն
7. Բոյարական Դուման որպես մոսկովյան պետության գերագույն մարմին
8. Զեմսկու Ժողովը որպես ներկայացուցչական մարմին.
9. Ռուսաստանում ճորտատիրական իրավունքի ներդրման հիմնական փուլերը:
10. «Սոբորնոե ուլոժենիե» որպես իրավունքի աղբյուր՝ ընդհանուր նկարագրություն
11. Պետրոս I- ի պետաիրավական բարեփոխումները
12. Եկատերինա II- ի տեղական ինքնակառավարման ոլորտում բարեփոխումների ընդհանուր բնութագիրը
13. Դասերի իրավական կարգավիճակը XVIII դարում:
14. XIX դարում Ռուսաստանի օրենսդրության կոդիֆիկացիան:
15. «Քրեական և ուղղիչ պատիժների օրենսգիրք» (1845) Ընդհանուր բնութագիր
16. Նախարարների խորհուրդը որպես Ռուսաստանի կայսրության բարձրագույն կառավարման մարմին
17. Պետական խորհուրդը որպես 19-րդ դարի Ռուսական կայսրության բարձրագույն օրենսդրախորհրդական մարմին:
18. Ռուսաստանում ճորտատիրական իրավունքի վերացումը. հիմնական փուլերը
19. Ալեքսանդր II -ի դատական բարեփոխումները
20. 1905-1906 թվականների Ռուսաստանի կայսրության քաղաքական համակարգի բարեփոխումները
21. 1905 թվականի հոկտեմբերի 17-ի «Հասարակական կարգի բարելավման մասին» մանիֆեստը. իրավական բնութագիրը և քաղաքական նշանակությունը
22. 1906 թվականի «Ռուսական կայսրության հիմնական օրենքները» որպես առաջին սահմանադրական ակտ
23. Ստոլիպինի հողային բարեփոխումները և գյուղատնտեսական օրենսդրությունը
24. Խորհրդային պետության պետական իշխանության և կառավարման բարձրագույն մարմինները (1917-ի հոկտեմբեր - 1918):
25. Խորհրդային իրավունքի և դատական համակարգի հիմունքների ձևավորումը:
26. 1918-ի ՌՍՖՍՀ-ի սահմանադրությունը որպես սոցիալիզմի առաջին սահմանադրություն
27. Խորհրդային իրավունքի առանձնահատկությունները ՆԵՊ-ի ժամանակ
28. 1924 թ. ԽՍՀՄ-ի Սահմանադրությունը ՝ որպես միութենական պետության առաջին սահմանադրություն
29. Խորհրդային օրենսդրության զարգացման հիմնական ուղղությունները 30-ական թվականներին
30. «Պերեստրոյկա» ժամանակաշրջանի պետական և իրավական բարեփոխումները
31. Ռուսաստանի դաշնության պետարաիավական համակարգի առանձնահատկությունները

## 11.4 Գործնական բլոկ (գործնական առաջադրանքների օրինակներ) ընթացիկ և միջանկյալ ստուգման, ինչպես նաև ինքնուրույն աշխատանքի համար

### *11.4.1 Գիտելիքի և իմացության գնահատում*

**Առաջադրանք 1. (իրավիճակային խնդիր)**

Ջոկատան Ռաստորգուևը իր համաջոկատայինների հետ վիճելիս խիստ զայրացավ և, մերկացնելով իր սուրը, հարձակվեց նրանց վրա: Ընկերներից մեկին՝ Վասիլինին, հաջողվել էր մի կողմ քաշվել, ուստի սրի հարվածը նրան մեծ վնաս չպատճառեց: Իսկ Գոլիցինը, անակնկալի գալով, չհասցրեց արձագանքել հարձակմանը, ինչի արդյունքում ծանր վիրավորվեց որովայնի շրջանում: Զայրացած Վասիլինը նույնպես հանեց իր սուրը և պատասխան հարված հասցրեց Ռաստորգուևին:

Ի՞նչ պատիժ կսահմանի դատարանը Ռաստորգուևի և Վասիլևի համար՝ «Ռուսական Պրավդայի» դրույթներին համապատասխան: Ի՞նչ որոշում կկայացվի Գոլիցինի վերաբերյալ: Հիմնավորեք ձեր պատասխանը՝ վկայակոչելով «Ռուսական Պրավդայի» հատուկ հոդվածները, որոնք կիրառելի են տվյալ դեպքում:

**Առաջադրանք 2. (իրավիճակային խնդիր)**

Առևտրական Դանիլովը խոհարար Կոստյուշկինին վարկ տրամադրեց 1000 արծաթե մետաղադրամի չափով, 6 ամիս ժամկետով, ամսական 3% տոկոսադրույքով: Կոստյուշկինը կարողացավ մարել իր պարտքը միայն մեկ տարի անց՝ մուծելով ամսական այն տոկոսադրույքը, որը նախատեսված էր վարկային պայմանագրով: Առևտրական Դանիլովը համարում է, որ գումարը նրան ամբողջ ծավալով չի վերադարձվել և դատական գործ է հարուցել Կոստյուշկինի դեմ:

Ի՞նչ կորոշի դատարանը՝ «Պսկովի դատական գիրի» դրույթներին համապատասխան: Հիմնավորեք ձեր պատասխանը՝ վկայակոչելով «Պսկովի դատական գիրի» այն հոդվածները, որոնք կիրառելի են այս դեպքում:

**Առաջադրանք 3. (իրավիճակային խնդիր)**

Պետաիրավական ինստիտուտների ձևավորման վրա ազդող հիմնական գործոնների իմացություն

**Խնդրի պայմանները.**

- **Իրավիճակ Ա:** Իշխանը Իգորը գտնվում է Վլադիմիր-Սուզդալյան իշխանությունում
- **Իրավիճակ Բ:** Իշխանը Նևսկին հրավիրվել է իշխելու Մեծ Նովգորոդում:

1. Բացատրե՛ք, թե ինչպես է այս երկու պետական կազմավորումների **հասարակական կարգը** և սոցիալական կառուցվածքը ազդել իշխանի կարգավիճակի վրա:

2. Որոշե՛ք Վլադիմիրո-Սուզդալյան և Նովգորոդի պետական կառավարման ձևը: Ինչպե՞ս է կառավարման ձևը սահմանափակում կամ ընդլայնում իշխանի լիազորությունները:

### Առաջադրանք 4. (իրավիճակային խնդիր)

Քաղաքացի Ա. Սինիցինան 1918 թ. նոյեմբերի 29-ին հայտարարություն էր ներկայացրել քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային գրասենյակ, որում քաղաքացի Բ. Գրաչևին նշել էր որպես իր նորածին երեխայի հայր: Նույն տարվա դեկտեմբերի 20-ին քաղաքացի Բ.Գրաչևը հայց ներկայացրեց դատարան՝ հայտարարելով, որ ինքն իրեն երեխայի հայր չի ճանաչում և որևէ ծախս չի կրելու երեխայի ապահովման համար:
:

Ի՞նչ որոշում կկայացնի դատարանը այս դեպքում ՝ Համառուսական կենտրոնական գործադիր կոմիտեի կողմից 1918 թվականին ընդունված «Քաղաքացիական կացության ակտերի, ամուսնության, ընտանիքի և խնամակալության մասին» ակտի համաձայն: Հիմնավորեք ձեր պատասխանը ՝ վկայակոչելով նշված իրավական ակտի համապատասխան նորմերը:

### *11.4.2 Հմտությունների գնահատում*

**Առաջադրանք** 1 Հիմնախնդրի վերլուծությունը ժամանակակից իրավական սկզբունքների ներքո

1. Պատմական սխալների կրկնությունը թույլ չտալու համատեքստում ներկայացրեք թե ինչ վտանգ էր պարունակում վաղ (անցումային) Խորհրդային քրեական օրենսդրության մեջ Հատուկ մասի բացակայությունը:

1.1 Ինչով էին ղեկավարվում ժողովրդական դատարանների դատավորները վճիռ կայացնելիս:

1.2 Վերլուծեք այս հիմնախնդիրը ժամանակակից «իրավական որոշակիության» և այլ արդի իրավական սկզբունքների ներքո:[1]

**Խնդիր 2** Իրավունքի մեկնաբանման տեսակների կիրառումը հին իրավական նորմերի պարզաբանման գործընթացում

---

[1] Իրավաբանի հմատությունները կայանում են ոչ միայն ժամանակակից օրենսդրության «տառն իմանալու», այլև պատմական սխալների կրկնությունը թույլ չտալըու մեջ: Օրինակ՝ խորհրդային իրավունքի անցումային շրջանում **իրավական որոշակիության բացակայության** բացասական հետևանքների իմացությունը թույլ է տալիս շրջանավարտին ավելի հիմնավորված պաշտպանել **օրինականության ռեժիմը,** պայքարել իրավական կարգավորման բացերի և դատական պրակտիկայում կամայական մեկնաբանությունների դեմ, և այսպիսով ճիշտ կողմնորոշվելիրավական համակարգի արդի խնդիրները լուծելիս:

Ըստ «Ռուսսկայա Պրավդայի» նորմերի, օրենքով ժառանգմանը մասնակցում էին բոլոր զավակները․ «Եթէ առանց պայմանի կմահանա, ապա բոլոր զավակներին» (Ծավալուն Պռավդայի 92 հոդվ)

Կիրառելով իրավունքի մեկնաբանման ժամանակակից տեսակները (սահմանափակ կամ տարածական մեկնաբանումը), ինչպես նաև ձեռք բերված պատմատեսական գիտելիքները ՝ որոշեք, թե ինչ պետք է հասկանալ «բոլոր զավակներին» դրույթի ներքո:

*11.4.3 Կարողունակության գնահատում (Ինքնուրույն տնային աշխատանք)*

Օրինակներ

**Ընդհանրական իմացական կարողությունների (ներառյալ դատողություններ անելու) գնահատում**

Խնդիր 1. Պետաիրավական երևույթների ախտորոշում և լուծումների նախագծում

1. Գնահատե՛ք «Օպրիչնինայի ինստիտուտը» որպես արտակարգ կառավարման երևույթ, որը ծագել է Իվան Ահեղ արքայի օրոք:

2. Ելնելով պատմական փորձի վերլուծությունից՝ առաջարկե՛ք իշխանության կենտրոնացման հնարավոր այլընտրանքային ուղիներ, որոնք թույլ կտային Իվան IV-ին պայքարել բոյարների անջատողականության դեմ՝ առանց պետական կարգի քայքայման և զանգվածային բռնաճնշումների և անօրինականությունների:

**Ինքնուրույնությունը և պատասխանատվությունը (ներառյալ սովորելու կարողությունները) գնահատում**[2]

Խնդիր 2. Ռուսական օրենսդրության և իրավական մշակույթի իմացության օգտագործումը արտասահմանյան աշխատանքային այցերի ընթացքում

**Իրավիճակ.** Միջազգային գիտական համաժողովում, նաև ռուսաստանյան իրավաբանների մասնակցությամբ, քննարկվում է դատական համակարգերի բարեփոխումների ժամանակակից միտումները:

1.Օգտագործելով ռուսական պետաիրավական մշակույթի (օրինակ՝ Ալեքսանդր II-ի ժամանակաշրջանի դատական և այլ բարեփոխումների) իմացությունը և հարգալից կերպով մատնանշելով Ռուսաստանի պետարիրավական համակարգի առանձնահատկությունները՝ մշակեք հաղորդակցման այնպիսի մարտավարություն, որը թույլ կտա ձեզ միաժամանակ պաշտպանել ժամանակակից իրավական մոտեցումները և դատական համակարգի անկախության սկզբունքը:

2. Ալեքսանդր II-ի դատական բարեփոխումների ո՞ր սկզբունքները դուք կվկայակոչեիք որպես օրինակելի հիմքեր ժամանակակից բարեփոխումների համար:

## 11.5 Միջանկյալ ստուգումների գրավոր առաջադրանքների նմուշներ

**Նմուշ 1. Վերլուծական հարցեր**

- **Հարց 1.** Կատարե՛ք քաղաքացիական իրավունքի համեմատական վերլուծություն 1917 թ. և ՆԷՊ-ի (Նոր տնտեսական քաղաքականություն) ժամանակաշրջանում և շրջափուլում

- **Հարց 2.** Վե՛ր հանեք աշխատանքային իրավունքի ճյուղի հիմնական նորամուծությունները ՌՍՖՍՀ 1918 թ. Աշխատանքային օրենսգրքի (Աշխատանքի մասին օրենքների ժողովածուի) ընդունման արդյունքում:

**Նմուշ 2. Տեսական հարցեր**

- **Հարց 1.** Նկարագրե՛ք Կայսեր իրավական կարգավիճակը՝ համաձայն Ռուսական Կայսրության Հիմնական օրենքների (1906 թ.):

- **Հարց 2.** Անվանե՛ք "Վերակառուցման" ժամանակաշրջանի (1980-ական թվականներ) բարձրագույն ներկայացուցչական մարմինը՝ նշելով դրա ձևավորման կարգը և գործառույթները:

## 11.6 Ստուգարքի գրավոր առաջադրանքների և տեսական հարցերի նմուշներ

**Նմուշ 1.**

1. Համաձայն «Ռուսկայա Պրավդա»-ի («Ռուսական իրավունք») նորմերի՝ ըստ օրենքի ժառանգությանը մասնակցում էին բոլոր զավակները. «Եթե մահանա առանց կտակի («առանց կարգադրության»), ապա [գույքը] բոլոր զավակներին» (Ընդարձակ Պրավդայի հոդված 92):

   Կիրառելով իրավունքի մեկնաբանման ժամանակակից տեսակները (սահմանափակող կամ ընդլայնողական մեկնաբանում), ինչպես նաև հիմնվելով ստացված պատմատեսական գիտելիքների վրա՝ որոշե՛ք, թե հատկապես ինչ պետք է հասկանալ «բոլոր երեխաներին» դրույթի ներքո:

---

[2] ՈՒնակ է կիրառել պատմաիրավական դասընթացի շրջանակներում ձեռք բերված բոլոր վերլուծական հմտությունները իր հետագա մասնագիտական գործունեության մեջ.

2. Ծարադրե՛ք 1917 թվականի համապատասխան դեկրետներից բխող խորհրդային ամուսնաընտանեկան իրավունքի հիմնական դրույթները:

**Նմուշ 2.**

1. «Կատարե՛ք ավազակության համար նախատեսված պատժի համեմատական վերլուծություն՝ ըստ «Ռուսկայա Պրավդա»-ի և Պսկովի դատաստանագրքի

2. Նկարագրեք միութենական բարձրագույն իշխանության մարմինների համակարգը՝ համաձայն ԽՍՀՄ 1924 թ. Սահմանադրության:

## 12. Առարկայի ուսումնամեթոդական նյութեր

**ա) Բազային գրականություն:**


1. **Исаев И. А История государства и прав России. Уч.пос. для бакалавров.-М.: Проспект, 2025**
2. История государства и права России учебник / И.А. Исаев. - 4, стер. - Москва : ООО "Юридическое издательство Норма", 2024.
3. История государства и права России: учебник/ В.М.Клеандрова,Р.С.Мулукаев., (под ред. Ю.П. Титова- 2-е изд.перераб и доп. М.:Проспект, 2012


**բ) Հիմնական գրականություն**


1. История государства и права России : учебник для вузов / В. Ф. Калина, Г. Ю. Курскова. — 3-е изд., испр. и доп. — Москва : Издательство Юрайт, **2024.**
2. История отечественного государства и права в 2 частях: учебник для академического бакалавриата / под ред. О.И.Чистякова / О. И. Чистяков, Т. Е. Новицкая, Л. В. Дюков и др. — Издательство Юрайт; ИД Юрайт М, 2016
3. Хрестоматия по истории отечественного государства и права ... для академического бакалавриата / О. И. Чистяков, Г. А. Кутьина. — 3-е изд., испр. и доп. М.: Изд. Юрайт, 2019
4. История государства и права России. Учебное пособие Исаев И.А.-М.:Проспект, 2015
5. Отечественное законодательство IX-XIX века. Пособие для семинаров /Под ред. О.И. Чистякова. М., 2000.
6. Вернадский Г.В. Очерк истории права русского государства. XVIII-XIX вв. (период империи). М., 1998.
7. Юшков С.В. История государства и права России (IX-XIX вв.). Ростов н/Д, 2003.
8. Практикум по дисциплине «История государства и права России» (часть I) / авт.-сост. канд. ист. наук О. А. Голикова. Новокузнецк:ФКОУ ВПО Кузбасский институт ФСИН России, 2015.
9. Ռուսաստանի պատմության հիմնահարցեր (XIX դար) Մուրադյան Մ. Ա. Բուհական դասագիրք, խմբ.՝ Է.Գ. Մինասյան, ԵՊՀ հրատ., 2011,


**գ) Լրացուցիչ գրականություն**

1. История отечественного государства и права : учеб. пособие для подготовки к кандидатскому экзамену / И.А. Исаев. — М. : Норма : ИНФРА-М, 2017.
2. Бушуев, С.В. История государства Российского. Книга 2. XVII-XVIII вв.: Историко-библиографические очерки. Новосиб.: Сиб. хронограф, 2012.
3. Туманова А.С. Самодержавие и общественные организации в России. 1905-1917 годы. Тамбов, 2002.
4. Вишневский А.А. Киевская Русь: введение христианства и проблема рецепции византийского церковного права // Государство и право. 1992. № 4.
5. Алексеев Ю.Г. Псковская судная грамота и её время. Л., 1980.
6. Шумилов М.М. Местное управление и центральная власть в России в 50 – начале 80-х годов XIX в. М., 1991.
7. Анисимов Е.В. Государственные преобразования и самодержавие Петра Великого. СПб., 1997.
8. Карамзин Н.М. История государства Российского: В 4 т. М., 1988.
9. Вернадский Г.В. Киевская Русь. М., 1996.
10. Законодательство периода образования и укрепления Русского централизованного государства - М., 1985.

**դ) Էլեկտրոնային ռեսուրս**

1. Калина, Н.Ф. История отечественного государства и права [Электронный ресурс]: учебник и практикум для прикладного бакалавриата / Н.Ф.Калина, Г.Ю.Курскова; ЭБС Юрайт. – М.: Юрайт, 2015. https://www.biblio-online.ru/bcode/433195
2. Информационно-правовой портал законодательства РФ https://garant.ru
3. Справочная правовая система РФ https:// www.consultant.ru

**ե) Ցուցադրելի նյութեր**

1._Սլայդային (հեղինակային) PPT պրեզենտացիաներ դասընթացի հիմնական թեմաներով:

## 13. Գնահատման մեթոդաբանություն

### 13.1 Բալերի բաշխումն ըստ ուսումնական գործունեության տեսակների և վերահսկողական միջոցառումների

Ուսումնական գործունեության տեսակների և վերահսկողական միջոցառումների միջև բալերի բաշխումն իրականացվում է բալային-վարկանիշային (ռեյտինգային) համակարգին համապատասխան: Ուսումնական գործունեության բոլոր տեսակների և վերահսկողական միջոցառումների գնահատականների ընդհանուր առավելագույն գումարը կազմում է 100 բալ:

#### 13.1.1 Ուսումնական գործունեության տեսակների և վերահսկողական միջոցառումների միջև բալերի բաշխումն իրականացվում է հետևյալ տոկոսային հարաբերակցությամբ.

1. **Ուսումնական գործունեության տեսակներ. ընթացիկ աշխատանք** սեմինարական պարապունքների ընթացքում՝ համաձայն սեմինար

պարապմունքների պլանների: Ներառում է սեմինարների ժամանակ ուսանողների բանավոր և գրավոր պատասխանները, մասնակցությունը քննարկումներին, գործնական խնդիրների լուծումը և առանձին դեպքերում՝ կատարված ինքնուրույն աշխատանքի ներկայացումը: Սեմինարների գնահատականների տեսակարար կշիռը միջանկյալ ստուգումների վերջնական բալային գնահատականում կազմում **է 40%»**

2. **Վերահսկողական միջոցառումներ՝ միջանկյալ ստուգում**, այսինքն՝ գրավոր աշխատանքի կատարում երկամսյա մոդուլի ուսումնասիրված թեմաների շրջանակներում: Իրականացվում է մոդուլի հարցաթերթիկներում ներառված տեսական հարցերի, կամ վերլուծական առաջադրանքների, կամ իրավիճակային խնդիրների գնահատման միջոցով: Միջանկյալ գրավոր աշխատանքի գնահատականի կշիռը միջանկյալ ստուգումների վերջնական բալային գնահատականում կազմում **60%-ը**:

**3. Վերահսկողական միջոցառումներ՝ դիֆերենցված ստուգարք:** Ամփոփիչ գրավոր աշխատանքի անցկացում ողջ կիսամյակի ընթացքում ուսումնասիրված թեմաների շրջանակներում: Իրականացվում է ստուգարքի հարցաթերթիկներում ներառված տեսական կամ վերլուծական առաջադրանքների, կամ իրավիճակային խնդիրների գնահատման միջոցով: Ստուգարքի գնահատականի կշիռը վերջնական ստուգման ամփոփիչ գնահատականում կազմում է **60%-ը**:

### 13.1.2 Բալերի բաշխումն ըստ գնահատման միջոցների տեսակների

Գնահատման միջոցների տեսակների շրջանակներում բալերի բաշխումը կախված է սեմինարական աշխատանքների, մոդուլների, ստուգարքի հարցաթերթիկներում ներառված հարցերի և առաջադրանքների բարդությունից ու աշխատատարությունից:

Մեկ ստուգողական թերթիկում տեսական հարցի և վերլուծական առաջադրանքի համակցման դեպքում դրանց «արժեքը» կարող է հարաբերակցվել համապատասխանաբար աշխատանքի առավելագույն բալի **40%-ի** և **60%-ի** համամասնությամբ (ելնելով բարդության մակարդակից):

*Օրինակ՝ տեսական հարց և վերլուծական առաջադրանք.*

- **Հարց 1.** Թվարկե՛ք Ստոլիպինյան ագրարային բարեփոխման հիմնական դրույթները (**40 բալ**)
- **Հարց 2.** Կատարե՛ք “Սոբորնոե Ուլոժենիայում” սահմանված ինկվիզիցիոն և մրցակցային դատավարության տեսակների վերլուծությունը (**60 բալ**)

Եթե հարցաթերթիկում ներառված երկու հարցերն էլ պատկանում են նույն կատեգորիային (երկուսն էլ տեսական են, կամ երկուսն էլ՝ վերլուծական), ապա դրանց միջև ընդհանուր բալերը կարող են բաշխվել ինչպես հավասար, այնպես էլ տարբեր տոկոսային հարաբերակցությամբ՝ կախված յուրաքանչյուր հարցի աշխատատարությունից և բարդությունից:

*Օրինակ՝ երկու տեսական հարց.*

- **Հարց 1.** Նկարագրե՛ք “Ռուսկայա Պրավդայի” կառուցվածքը (**55 բալ**)

- **Հարց 2.** Ի՞նչ էր իրենից ներկայացնում Ժամանակավոր կառավարությունը (**45 բալ**)

## 13.2 Գնահատման չափանիշներն ըստ յուրաքանչյուր գնահատման միջոցի

Ուսանողների գիտելիքների գնահատումն իրականացվում է տարբերակված եղանակով՝ ըստ ուսումնական գործունեության յուրաքանչյուր տեսակի և կիրառվող գնահատման միջոցների:

**1. Գնահատականներ սեմինարական պարապմունքների ընթացքում (բանավոր հարցում, քննարկումներ, բանավեճեր, իրավիճակային խնդիրների լուծում)**

**Բարձր բալեր** նշանակվում են, եթե ուսանողը հարցման ժամանակ ցուցաբերում է ճիշտ կառուցված, գրագետ խոսք և ընթացիկ սեմինարի նյութի ազատ տիրապետում, ինչպես նաև առնվազն կողմնորոշվում է նախորդ սեմինարների թեմատիկայում, և ընդհանուր առմամբ տիրապետում է Ռուսաստանի պետության և իրավունքի պատմության ժամանակագրությանը: Պատրաստակամորեն պատասխանում է լրացուցիչ հարցերին, տիրապետում է անհրաժեշտ տերմինաբանական ապարատին, ակտիվ ու փաստարկված մասնակցում է քննարկումներին և գործնական խնդիրների լուծմանը, տրամաբանական և հաջորդական ձևով շարադրում է հիմնական դրույթները:

**Բալերի նվազեցում** տեղի է ունենում ժամանակագրության մեջ կամ պետաիրավական հասկացություններին ու կատեգորիաներին վերաբերող ձևակերպումներում անճշտությունների առկայության, նյութի ոչ հաջորդական շարադրման, դասախոսի ստուգողական և լրացուցիչ հարցերին պատասխանելիս դժվարությունների, քննարկումներում թույլ փաստարկման կամ ինչպես սեմինարական, այնպես էլ դասախոսական պարապմունքների ժամանակ տարբեր հարցերի քննարկմանը պասիվ մասնակցության դեպքում:

**Անբավարար բալեր** նշանակվում են առարկայի բազային պետաիրավական հասկացությունների և կատեգորիաների սահմանման մեջ կոպտագույն սխալների, դրանց էության աղավաղման, պատմական ժամանակագրության մեջ կողմնորոշման բացակայության դեպքում, սեմինարական պարապմունքի հանձնարարված նյութին ակնհայտորեն չտիրապետելու դեպքում, դասախոսի կողմից տրված ստուգողական հարցերին պատասխանելուց հրաժարվելու կամ չկարողանալու դեպքում: Ինչպես նաև այն դեպքում, երբ ուսանողն ի վիճակի չէ բանավոր խոսքի միջոցով հստակ շարադրել պատասխանը սահմանված կանոնակարգային ժամանակահատվածում (դադարների երկարաձգում, շարադրման չափազանց դանդաղ տեմպ կամ միտքը ձևակերպելու անկարողություն, ինչը հանգեցնում է պարապմունքի ժամանակացույցի զգալի խախտման):

**2. Պատասխաններ տեսական և վերլուծական հարցերին, կամ իրավիճակային խնդիրներին և այլ առաջադրանքներին գրավոր <u>միջանկյալ ստուգման (մոդուլի) աշխատանքներում</u>**

**Բարձր բալեր** նշանակվում են, եթե ուսանողը ճիշտ է որոշել պետաիրավական երևույթի էությունը (օրինակ՝ դասային կառուցվածքի առանձնահատկությունները,

բնակչության տարբեր խավերի իրավական կարգավիճակը, տվյալ պատմական շրջանի պետական կարգի առանձնահատկությունները, իրավունքի տարբեր ինստիտուտների և ճյուղերի իրավական կարգավորման առանփնահատկությունները, ցուցաբերել է Ռուսաստանի իրավունքի տարբեր պատմական աղբյուրների առանձնահատկությունների պատշաճ իմացություն, որի հիման վրա կատարել է *անհրաժեշտ համեմատական, պատմաիրավական վերլուծություն, առաջարկել է առաջադրանքների ճիշտ, տրամաբանորեն շարադրված ու փաստարկված լուծումներ և հարցերի պատասխաններ*։

**Բալերի նվազեցում** տեղի է ունենում, եթե հարցերին պատասխանելիս, ինչպես նաև վերլուծության մեջ թույլ են տրվել էական սխալներ, ուսանողի եզրակացությունները մակերեսային են կամ բացակայում են, նկատվում է իրավունքի աղբյուրների ոչ պատշաճ (կամ՝ թույլ) տիրապետում։ *Գրավոր նյութը շարադրված է ոչ համակարգված, առկա են շեղումներ տրված հարցերից, կամ դասախոսի կողմից առաջադրված հարցերի վերլուծության և ուղղակի պատասխանի փոխարեն տեղի է ունենում ուսուցողական նյութերից թեմայի տեքստի պարզ մեխանիկական շարադրում*։

**Անբավարար բալեր** նշանակվում են, եթե ուսանողն ի վիճակի չէ գրավոր ձևով հստակ շարադրել տրված հարցերի և առաջադրանքների պատասխանները՝ *նկատվում է նյութի խառնաշփոթ շարադրում և որևէ տրամաբանության ու եզրահանգումների բացակայություն:* Առարկայի բազային պետաիրավական հասկացությունների և կատեգորիաների սահմանման մեջ կոպտագույն սխալների, դրանց էության աղավաղման, պատմական ժամանակագրության մեջ կողմնորոշման բացակայության դեպքում։ Այն դեպքերում, երբ *ըստ էության բացակայում են ստուգողական թերթիկներում դրված հարցերի ուղղակի պատասխանները, ինչպես նաև փորձ է արվում փոխարինել հարցերը և նկարագրել առաջադրանքին չվերաբերող այլ թեմաներ:* Ընդհանուր առմամբ, ուսանողի պատասխանները կրիտիկականորեն թույլ չեն տալիս հաղթահարել նվազագույն անցողիկ շեմը՝ **40 բալը**։

### 3. Գրավոր դիֆերենցված ստուգարք (ըստ ստուգողական հարցաթերթիկների)

Ստուգողական հարցաթերթիկի յուրաքանչյուր առաջադրանք ունի բալերով արտահայտված ֆիքսված «արժեք», որը նշված է հարցի վերջում՝ փակագծերում, որոնց համաձայն էլ իրականացվում է ուսանողի աշխատանքի գնահատումը։ Ամփոփիչ ատեստավորման գնահատման ժամանակ բալերի բաշխումը կախված է հարցաթերթիկներում ներառված հարցերի և առաջադրանքների բարդությունից ու աշխատատարությունից [3]. Հավաքած բալերի վերջնական արդյունքը ձևավորվում է ուսանողների գիտելիքների որակի գնահատման 0-ից 100 բալանոց սանդղակին համապատասխան, որը սահմանված է «ՀԱՀ-ի կրեդիտա-ռեյտինգային համակարգի և ուսումնական գործընթացի կազմակերպման կանոնակարգով»։

[3] Պարզ տեսական հարցերը, վերլուծական առաջադրանքները և իրավիճակային խնդիրները գնահատվում են տարբերակված ձևով։ Օրինակ՝ մեկ ստուգարքային կամ քննական թերթիկում տեսական հարցի և վերլուծական առաջադրանքի համակցման դեպքում դրանց «արժեքը» կարող է հարաբերակցվել համապատասխանաբար աշխատանքի առավելագույն բալի **40%-ի** և **60%-ի** համամասնությամբ (ելնելով բարդության մակարդակից)։ Եթե երկու հարցերն էլ պատկանում են նույն կատեգորիային (երկուսն էլ տեսական են կամ երկուսն էլ՝ վերլուծական), ապա դրանց միջև ընդհանուր բալերը նույնպես կարող են բաշխվել տարբեր տոկոսային հարաբերակցությամբ՝ կախված յուրաքանչյուր հարցի աշխատատարությունից։

**Բարձր բալեր** նշանակվում են, եթե ուսանողը ճիշտ է որոշել պետաիրավական երևույթի էությունը (օրինակ՝ դասային կառուցվածքի առանձնահատկությունները, բնակչության տարբեր խավերի իրավական կարգավիճակը, տվյալ պատմական շրջանի պետական կարգի առանձնահատկությունները, իրավունքի տարբեր ինստիտուտների և ճյուղերի իրավական կարգավորման սպեցիֆիկան, ցուցաբերել է Ռուսաստանի իրավունքի տարբեր պատմական աղբյուրների առանձնահատկությունների պատշաճ իմացություն), որի հիման վրա *կատարել է անհրաժեշտ համեմատական, պատմաիրավական վերլուծություն, առաջարկել է առաջադրանքների ճիշտ, տրամաբանորեն շարադրված ու փաստարկված լուծումներ և հարցերի պատասխաններ:*

**Միջին բալեր.** միջին բալերի վերին սեգմենտում ուսանողը նյութը շարադրում է ընդհանուր առմամբ ճիշտ, բայց բավականին մակերեսային, պատասխանները կարող են պարունակել որոշ բացթողումներ և բացեր փաստարկման մեջ, վերլուծության մեջ թույլ են տրվել որոշակի անհամապատասխանություններ, նկատվում է իրավունքի աղբյուրների ոչ պատշաճ (կամ՝ թույլ) տիրապետում:: Միջին բալերի ստորին սեգմենտում գրավոր *նյութը շարադրված է ոչ համակարգված, առկա են էական սխալներ և շեղումներ տրված հարցերից, կամ դասախոսի կողմից առաջադրված հարցերի վերլուծության և ուղղակի պատասխանի փոխարեն տեղի է ունենում ուսուցողական նյութերից տեքստի պարզ մեխանիկական շարադրում:* Ստուգողական հարցաթերթիկի հարցերի մի մասի պատասխանների սխալները կարող են փոխհատուցվել այլ հարցերի վերաբերյալ գիտելիքների առկայությամբ:

**Ցածր բալեր** նշանակվում են, եթե ուսանողի պատասխանները ցուցադրում են *ֆրագմենտար (հատվածական) գիտելիքներ, թույլ են տրվել լուրջ սխալներ, հարցերի պատասխանները թերի են կամ մասնակիորեն բացակայում են*, միաժամանակ՝ ճիշտ պատասխանների համախառն ծավալը բավարար է նվազագույն անցողիկ բալը հավաքելու համար:

**Անբավարար բալեր** նշանակվում են, եթե ուսանողն *ի վիճակի չէ գրավոր ձևով հստակ շարադրել տրված հարցերի և առաջադրանքների պատասխանները՝ նկատվում է նյութի խառնաշփոթ շարադրում և որևէ տրամաբանության ու եզրահանգումների բացակայություն*: Առարկայի բազային պետաիրավական հասկացությունների և կատեգորիաների սահմանման մեջ կոպտագույն սխալների, դրանց էության աղավաղման դեպքում, երբ ուսանողը չի կողմնորոշվում Ռուսաստանի պետության և իրավունքի պատմության ժամանակագրության և պարբերացման մեջ: Այն դեպքերում, *երբ ըստ էության բացակայում են ստուգողական թերթիկներում դրված հարցերի ուղղակի պատասխանները, ինչպես նաև փորձ է արվում փոխարինել հարցերը և նկարագրել առաջադրանքին չվերաբերող այլ թեմաներ:* Ընդհանուր առմամբ, ուսանողի պատասխանները կրիտիկականորեն թույլ չեն տալիս հաղթահարել նվազագույն անցողիկ շեմը՝ **40 բալը**:

### 13.3 Բալերը վերջնական գնահատականի փոխարկելու սանդղակ

Կիսամյակի ընթացքում հավաքած բալերի գումարի փոխարկումը ակադեմիական վերջնական գնահատականի իրականացվում է ուսանողների գիտելիքների որակի գնահատման՝ 0-ից մինչև 100 բալանոց միասնական սանդղակի համաձայն, որը սահմանված

է 2005թ. հուլիսի 6-ի «ՌՀՀ ուսումնական գործընթացի կազմակերպման կրեդիտա-ռեյտինգային համակարգի մասին կանոնակարգով» N 228-ով (2007թ. նոր խմբագրությամբ):

### 13.4 Առարկայի վերջնական գնահատականի ձևավորման կարգը

«Ռուսաստանի պետության և իրավունքի պատմություն» առարկայի վերջնական գնահատականը հաշվարկվում է կումուլյատիվ (կուտակային) մեթոդով և բաղկացած է մի քանի հիմնական բաղադրիչներից.

- **Ընթացիկ գնահատականը** ձևավորվում է սեմինարների ժամանակ և հաշվարկվում է որպես հարցումների ընթացքում ուսանողի ստացած բոլոր գնահատականների միջին թվաբանական, որը ներառում է նաև սեմինարական պարապմունքներին ուսանողի ակտիվության բոլոր տեսակները:
- **Միջանկյալ ստուգման գնահատականը** ձևավորվում է գրավոր աշխատանքի արդյունքների հիման վրա, որն ընդգրկում է ամբողջ մոդուլի թեմաներից ընտրված հարցերը՝ դրանով իսկ ընդհանրացնելով երկու ամսվա ընթացքում ուսումնասիրված նյութերը: Միջանկյալ ստուգման վերջնական գնահատականը ձևավորվում է ընթացիկ և միջանկյալ ստուգումների գնահատականների հիման վրա (**40%** և **60%** հարաբերակցությամբ):
- **Վերջնական ստուգման (դիֆերենցված ստուգարքի) գնահատականը** նշանակվում է ստուգարքային հարցաթերթիկներում ներառված առաջադրանքների կատարման արդյունքների հիման վրա:
- **Վերջնական ստուգման ամփոփիչ գնահատականը** իրենից ներկայացնում է հանրագումարային բալ, որը ձևավորվում է ուսանողի կողմից ընթացիկ, միջանկյալ և ամփոփիչ ստուգման (ստուգարքի) արդյունքների հիման վրա, որտեղ ստուգարքի կշիռը կազմում է վերջնական գնահատականի **60%-ը:**

### 13.5 Դրական գնահատական ստանալու նվազագույն պահանջները

Դրական գնահատական, այդ թվում՝ «Ստուգված» ամփոփիչ գնահատական ստանալու համար ուսանողը պարտավոր է կատարել հետևյալ նվազագույն պահանջները[4].

- **Սեմինարական և դասախոսական պարապմունքների ընթացքում** ուսանողը պետք է ապահովի բնականոն հաճախելիություն, որը թույլ կտա նրան յուրացնել առարկայի առանցքային թեմաները: Սեմինարի ժամանակ բանավոր պատասխանի դեպքում նվազագույն դրական գնահատական ստանալու համար ուսանողին բավական է թեման իմանալ դասախոսի կողմից կազմված դասախոսությունների համառոտ կոնսպեկտի շրջանակներում: Նշված կոնսպեկտը՝ յուրաքանչյուր թեմայի սեմինարի պատասխանի պլանի հետ միասին, դասախոսի կողմից նախապես բաժանվում է ուսանողներին, ինչը հեշտացնում է սեմինարին պատրաստվելը:
- **Միջանկյալ ստուգման ընթացքում** անհրաժեշտ է գրել մոդուլի արդյունքներն ամփոփող գրավոր աշխատանք՝ թույլ չտալով կոպտագույն կրիտիկական սխալներ, և գրավոր առաջադրանքների բոլոր տեսակների համար ընդհանուր

[4] Պատասխաններին ներկայացվող բովանդակային պահանջները տե՛ս 13.2 կետում՝ ըստ յուրաքանչյուր գնահատման միջոցի

առմամբ հավաքել առնվազն 40 բալ (նվազագույն շեմ): Բոլոր գրավոր աշխատանքների հարցաթերթիկներում դասախոսի կողմից նախատեսվում է առնվազն մեկ ցածր բարդության հարց, որը չի պահանջում բարդ գործնական խնդիրների լուծում: Նվազագույն անցողիկ բալ ստանալու համար թույլատրվում է պատրաստվել դասախոսի կողմից կազմված դասախոսությունների համառոտ կոնսպեկտով:

- **Ամփոփիչ ստուգում՝ դիֆերենցված ստուգարք.** անհրաժեշտ է կատարել գրավոր առաջադրանքները ստուգողական հարցաթերթիկից: Ամփոփիչ ստուգման ժամանակ 40 բալ ստանալու համար ուսանողին անհրաժեշտ է տիրապետել ստուգարքի հարցաշարում ներառված տեսական հարցերին: *Նվազագույն անցողիկ բալ ստանալու համար թույլատրվում է պատրաստվել դասախոսի կողմից կազմված դասախոսությունների համառոտ կոնսպեկտով:*
- **Ընդհանուր արդյունք.** ընթացիկ, միջանկյալ և ամփոփիչ ստուգման (ստուգարքի) արդյունքներով ուսանողի հավաքած հանրագումարային բալը պետք է կազմի առնվազն 40 բալ՝ վերը սահմանված տոկոսային հարաբերակցությանը համապատասխան:

## 13.6 Գնահատման միջոցների համապատասխանությունը դասընթացի ուսումնառության արդյունքներին

| Որակավորման ընդհանուր նկարագիրը (բնորոշումը) | Դասընթացի ուսումնառության արդյունք | Գնահատման միջոցի տեսակը և անվանումը |
|---|---|---|
| *Գիտելիքները՝*<br><br>Գիտելիք և իմացություն . | 1. Ռուսաստանի պետության և իրավունքի ձևավորման և զարգացման առանձնահատկություններ ի մասին հիմնարար գիտելիք.<br>2. Ռուսաստանի պետաիրավական ինստիտուտների և հասարակական կարգի ձևավորման վրա ազդող հիմնական գործոնների իմացություն.<br>3. Ռուսաստանի իրավական համակարգի, այդ թվում իրավունքի հուշարձանների, իրավունքի ճյուղերի և ինստիտուտների պատմական զարգացման միտումների վերաբերյալ հիմնարար գիտելիք. | ***1.Բանավոր կամ գրավոր հարցում՝*** ստուգարքի հարցաշարից<br><br>**2. *Իրավիճակային խնդիրներ* №1, 2, 3, 4, 5**<br><br>***3. Միջանկյալ ստուգման գրավոր առաջադրանքների նմուշներ***<br><br>Նմուշ 1. Վերլուծական հարցեր<br><br>Նմուշ 2. Տեսական հարցեր<br><br>**4. *Ստուգարքի*** |

| | | |
|---|---|---|
| | | ***առաջադրանքների և տեսական հարցերի նմուշներ***<br><br>Նմուշ 1․ Առաջադրանք և տեսական հարց<br><br>Նմուշ 2. Վերլուծական հարց և տեսական հարց |
| *Հմտությունները՝*<br><br>**Գիտելիքի և իմացության կիրառում.** | 1.Կարող է արագ կողմնորոշվել իրավական համակարգի արդի խնդիրները լուծելիս, և դրանց վերաբերյալ ներկայացնել իր փաստարկված դիրքորոշումը՝ այդ թվում կիրառելով իրավական համակարգի պատմական զարգացման հիմնական ուղղությունների իմացությունը.<br><br>2.Կարող է իրավունքի մեկնաբանման կանոնների կիրառմամբ պարզաբանել հին ռուսական իրավունքի նորմերը և պայմանագրերը: | ***1.Բանավոր կամ գրավոր հարցում՝*** ստուգարքի հարցաշարից<br><br>***2.Հմտությունների գնահատում.***<br>**Գրավոր առաջադրանք 1**․ Հիմնախնդրի վերլուծությունը ժամանակակից իրավական սկզբունքների ներքո<br>**Գրավոր առաջադրանք 2․** Իրավունքի մեկնաբանման տեսակների կիրառումը հին իրավական նորմերի պարզաբանման գործընթացում<br><br>***3. Միջանկյալ ստուգման գրավոր առաջադրանքների նմուշներ***<br><br>Նմուշ 1. Վերլուծական հարցեր<br><br>Նմուշ 2. Տեսական հարցեր<br><br>***3. Ստուգարքի առաջադրանքների և տեսական հարցերի նմուշներ***<br><br>Նմուշ 1․ Առաջադրանք և |

| | | |
|---|---|---|
| | | տեսական հարց<br><br>Նմուշ 2. Վերլուծական հարց և տեսական հարց |
| *Կարողունակությունը (կոմպետենցիան)՝*<br><br>**1.Ընդհանրական իմացական կարողություններ (ներառյալ դատողություններ անելը).** | 1. Կարող է կիրառել մասնագիտական գիտելիքները և դրսևորել վերլուծական հմտությունները Ռուսաստանի պետաիրավական երևույթների առավել հաճախ հանդիպող խնդիրները բացահայտելու, գնահատելու և դրանց լուծումների ուղիները առաջարկելու համար. | ***1. Ինքնուրույն տնային աշխատանք***<br><br>Խնդիր 1. Պետաիրավական երևույթների ախտորոշում և լուծումների նախագծում<br><br>***2. Միջանկյալ ստուգման գրավոր առաջադրանքների նմուշներ***<br><br>Նմուշ 1. Վերլուծական հարցեր<br><br>Նմուշ 2. Տեսական հարցեր<br><br>***3. Ստուգարքի առաջադրանքների և տեսական հարցերի նմուշներ***<br><br>Նմուշ 1. Առաջադրանք և տեսական հարց<br><br>Նմուշ 2. Վերլուծական հարց և տեսական հարց |
| **2. Ինքնուրույնությունը և պատասխանատվությունը (ներառյալ սովորելու կարողությունները).** | 1. Ունակ է՝ ինքնուրույն կամ համապատասխան ղեկավարման ներքո բարեխղճորեն կիրառել պատմաիրավական դասընթացի շրջանակներում ձեռք բերված բոլոր վերլուծական հմտությունները իր հետագա մասնագիտական գործունեության մեջ.<br><br>2. Ունակ է՝ պարբերաբար ուսումնասիրել ռուսական | ***1. Ստուգարքի առաջադրանքների և տեսական հարցերի նմուշներ***<br><br>Նմուշ 1. Առաջադրանք և տեսական հարց<br><br>Նմուշ 2. Վերլուծական հարց և տեսական հարց |

| | | |
|---|---|---|
| | օրենսդրությունը և իրավակիրառ պրակտիկան, և անհրաժեշտության դեպքում այն օգտագործել արտասահմանյան աշխատանքային այցերի ընթացքում՝ Ռուսաստանի բազմամշակութային աշխատանքային միջավայրում ինտեգրվելու համար | ***2.Ինքնուրույն տնային աշխատանք***<br><br>**Խնդիր 2. Հիպոտետիկ իրավիճակ միջազգային գիտական համաժողովում**<br><br>Ռուսական օրենսդրության և իրավական մշակույթի իմացության օգտագործումը արտասահմանյան աշխատանքային այցերի ընթացքում |

## 14. Մեթոդական բլոկ

14.1.1. Մեթոդական ուղեցույց ուսանողների համար՝ սեմինարական, գործնական պարապմունքներին պատրաստվելու և ինքնուրույն աշխատանքի կազմակերպման վերաբերյալ

Առարկայի ուսումնական ծրագիրը ներառում է դասախոսական պարապմունքներ, սեմինարական պարապմունքներ, ինչպես նաև ուսանողների ինքնուրույն աշխատանք: Դասընթացի շրջանակներում կիրառվում են ինչպես դասական, այնպես էլ ժամանակակից ինտերակտիվ տեխնոլոգիաների տարրեր (բանավեճեր, քննարկումներ, դատախաղեր և այլն):

**Դասախոսական պարապմունքներ.** Դասընթացի հիմնական տեսական նյութը շարադրվում է դասախոսությունների ժամանակ: Դասախոսական պարապմունքների ընթացքում ուսանողներին տրամադրվում է ուսուցողական օժանդակող նյութեր, որտեղ համառոտ ձևով շարադրված են տվյալ դասախոսության ժամանակ ուսումնասիրվող թեմայի հիմնական թեզերը և առանցքային դրույթները: Դասախոսական պարապմունքը կարող է ուղեկցվել դասընթացի հիմնական թեմաներով պատրաստված (հեղինակային) PPT պրեզենտացիաներով:

Դասախոսությունների ընթացքում ուսանողներին անհրաժեշտ է կոնսպեկտավորել և նշումներ կատարել՝ դասախոսի կողմից ներկայացվող ձևակերպումների ու կատեգորիաների էությունը բաց չթողնելու, ինչպես նաև դասախոսի եզրահանգումներն ու գործնական հանձնարարականները արձանագրելու համար: Դա անհրաժեշտ է նաև սեմինարական պարապմունքներին, միջանկյալ ստուգումներին և ամփոփիչ ատեստավորմանը որակյալ պատրաստվելու համար:

**Սեմինարական պարապմունքներ.** Սեմինարական պարապմունքների ժամանակ տեղի է ունենում դասախոսությունների ժամանակ ներկայացված նյութի մշակում, ավելի խորը և մանրամասն ուսումնասիրություն: Մասնավորապես, եթե ուսանողները պատշաճ կերպով չեն յուրացրել դասախոսություններին շարադրված

նյութը, դասախոսը լրացուցիչ պարզաբանում է դասախոսության ժամանակ անցած թեմաները:

Սեմինարական պարապմունքները կարող են անցկացվել գրավոր ձևով՝ թեմայի վերաբերյալ թեստեր լրացնելու կամ համապատասխան առաջադրանքներ կատարելու միջոցով: Սեմինարի պարապմունքների ընթացքում ուսանողներին կարող են տրվել նաև դասընթացի հիմնական թեմաների վերաբերող գործնական խնդիրներ, ինչից հետո տեղի է ունենում խնդիրների լուծման տարբերակների ընդհանուր քննարկումը և ուսանողի համապատասխան գնահատումը դասախոսի կողմից:

Սեմինարական պարապմունքի հարցերին որակյալ պատրաստվելու համար ուսանողը պետք է ուսումնասիրի դասախոսությունների նյութերը, հիմնական գրականությունը/բազային դասագրքերը, այնուհետև ծանոթանա լրացուցիչ գրականությանը, որից հետո խորհուրդ է տրվում նախապես կազմել սեփական պատասխանի նախագիծ-կոնսպեկտը: Սեմինարներին պատրաստվելիս խորհուրդ չի տրվում ուսումնասիրել առանձին թեմաներ՝ կտրված նախորդ թեմաներից և պատմական շրջաններից, առանց ժամանակագրական հաջորդականությունը հաշվի առնելու: Ինչպես նաև ուսանողն անհրաժեշտ է ուշադրություն դարձնի դասընթացի անցած թեմաներով գործնական խնդիրների լուծման հմտությունների զարգացմանը:

**Ինքնուրույն աշխատանք.** Ինքնուրույն աշխատանքի ընթացքում ուսանողն իրականացնում է դասընթացի նյութերի լրացուցիչ ուսումնասիրություն՝ ուսումնական ծրագրին և առաջարկվող տարբեր աղբյուրներին (բազային, հիմնական և լրացուցիչ գրականությանը) համապատասխան: Խորհուրդ է տրվում դասընթացն ուսումնասիրել ըստ նյութի ժամանակագրական հաջորդականության՝ կազմված պլանի և թեմաների բովանդակությանը համապատասխան: Հաշվի առնելով թեմաների փոխկապակցվածությունը և դրանց փոխպայմանավորվածությունը՝ խորհուրդ չի տրվում ուսումնասիրել առանձին թեմաներ՝ նախորդ թեմաներից և պատմական շրջաններից կտրված:

14.1.2 Մեթոդական ուղեցույց ուսանողների համար՝ միջանկյալ ստուգումներին և ամփոփիչ ատեստավորմանը պատրաստվելու համար

*Դասընթացի միջանկյալ ստուգումը/մոդուլն* անցկացվում է գրավոր ձևով և ներառում է երկամսյա մոդուլի ընթացքում ուսումնասիրված թեմաներին առնչվող հարցեր և/կամ առաջադրանքներ (2-3 հարցի/առաջադրանքի ծավալով): Միջանկյալ ստուգմանը պատրաստվելիս ուսանողին անհրաժեշտ է կրկնել տվյալ երկամսյա մոդուլի ընթացքում դասախոսի կողմից ներկայացված և հանձնարարված ամբողջ նյութը:

*Ամփոփիչ ստուգումը* ստուգարքի ձևով իրականացվում է երկու մոդուլների ընթացքում ուսումնասիրված նյութերի ընդհանրացման միջոցով: Ատեստավորումը կարող է ներառել տեսական կամ վերլուծական հարցեր, կամ իրավիճակային խնդիրներ՝ կիսամյակի ընթացքում ուսումնասիրված թեմաների շրջանակներում: Ստուգողական աշխատանքը ընդհանուր առմամբ ներառում է երկու կամ երեք հարց/առաջադրանք/խնդիր ստուգարքի հարցաշարում թվարկված թեմաների ցանկից: Ամփոփիչ ատեստավորմանը պատրաստվելիս ուսանողին անհրաժեշտ է կրկնել երկու մոդուլների ընթացքում ուսումնասիրված բոլոր նյութերը, ինչպես նաև ստուգարքի հարցաշարում ներառված բոլոր հարցերը/թեմաները: